

Արա Սանճյան. ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ԱՌԱՋ*

– Ի՞նչ մարտահրավերների առջև է կանգնած այսօր Սիրիայի հայ համայնքը, եւ ի՞նչ հետեւանքներ կարող է ունենալ սիրիահայ գաղութի համար Բաշար ալ-Ասադի վարչակարգի հնարավոր փոփոխությունը:

– Սիրիայում քաղաքական եւ անվտանգության ոլորտներում տիրող անհանգիստ իրավիճակը մի քանի ամիս է, ինչ շարունակվում է, եւ դեռեւս դժվար է կանխագուշակել, թե ինչպես կհանգուցալուծվեն դեպքերը: Համենայնդեպս, մտավախություն ունեն, որ զարգացումների բոլոր հնարավոր տարբերակները՝ թե՛ կարճաժամկետ, թե՛ երկարաժամկետ, անդառնալի հետեւանքներ ունենան սիրիահայության համար:

2011-ի մարտ ամսից ի վեր Սիրիայի քաղաքական խճանկարը բաժանված է երկու հակամարտ ճամբարների: Արձագանքելով «արաբական գարնան» համատեքստում ժողովրդական պահանջներին՝ ավելի քան 40 տարի իշխանության մեջ գտնվող ալ-Ասադ ընտանիքի գլխավորած Բաաս կուսակցության վարչակարգն իր հրապարակային հայտարարություններում ընդունեց քաղաքական բարեփոխումների անհրաժեշտությունը: Արդյունքում՝ նախ, վերացվեց 1963-ից ի վեր անընդմեջ գործող արտակարգ դրությունը, ապա՝ սահմանադրության, ինչպես նաեւ քաղաքական կուսակցությունների մասին օրենքում եւ ընտրական օրենքում փոփոխություններ մտցվեցին: Սակայն նշված բարեփոխումները կյանքի են կոչվում շատ դանդաղ, եւ դեռեւս հստակ չէ, թե դրանք, ի վերջո, որեւէ որակական փոփոխություն մտցնելու են Սիրիայի քաղաքական համակարգում, թե ոչ:

Միաժամանակ, Սիրիայի իշխանությունները շարունակում են պնդել, թե իրենց երկրում տեղի ունեցածը միջազգային դավադրության հետեւանք է՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների, արեւմտաեվրոպական մի շարք պետությունների, Արաբական կամ Պարսից ծոցի միապետական

* Միջիգամի համալսարան-Դիրբոռնի հայագիտական հետազոտությունների կենտրոնի վարիչ, արեւելագետ, պրոֆ. Արա Սանճյանի հետ սույն հարցազրույցը արտատպված է «Սիրիայի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ» գրքից (հեղ.՝ Արաքս Փաշայան, Լիլիթ Հարությունյան, Եր., 2011):

վարչակարգերի եւ Թուրքիայի հովանավորությամբ: Ըստ Սիրիայի կառավարության եւ Մերձավոր Արեւելքում նրա համակիրների՝ այդ երկրները ձգտում են տապալել նախագահ ալ-Ասադի վարչակարգը, որովհետեւ վերջինս արմատական կեցվածք ունի Իսրայելի հանդեպ եւ դաշնակցում է Իրանի Իսլամական Հանրապետության հետ: Այս մեկնակետից ելնելով՝ սիրիական իշխանությունները կանոնավորաբար ուժ են կիրառում հակակառավարական շարժման մասնակիցների նկատմամբ: Իսկ նման կոշտ դիրքորոշում հնարավոր եղավ հետապնդել, որովհետեւ սիրիական բանակի ղեկավարությունն ու զինվորականության ջախջախիչ մեծամասնությունը հավատարիմ մնացին նախագահ ալ-Ասադին եւ նրա անմիջական շրջապատին՝ ի տարբերություն Թունիսի եւ Եգիպտոսի: Այդ երկրներում բանակի հրամանատարական կազմերը, չեզոք դիրք բռնելով կառավարության ու ցուցարարների միջեւ, գործնականում արագացրին նախագահներ Ջեյն ալ-Աբիդին Բեն Ալիի ու Հոսնի Մուբարաքի քաղաքական մեկուսացումն ու նրանց հրաժարականները:

Սիրիական ընդդիմությունը, որի հիմնական մասն արտասահմանում է, բարեփոխումների հարցում թերահավատ է: Ընդդիմադիրները Բաշար ալ-Ասադին հանցավոր են համարում մարտ անսից Սիրիայում թափված արյան համար, իսկ իշխանությունից նրա հեռանալը համարում են կարելուր նախապայման՝ երկրում ժողովրդավարական կարգեր հաստատելու ճանապարհին:

Այսուհանդերձ, Սիրիայի ընդհանուր բնակչության կես տոկոսից էլ պակաս թվաքանակ ունեցող հայության ջախջախիչ մեծամասնությունը, ինչպես նաեւ համեմատաբար ավելի մեծաթիվ արաբախոս քրիստոնյաներն ու իսլամադավան, բայց ոչ սուննի փոքրամասնությունները, չեն հավատում սիրիական ընդդիմության քաղաքական լոզունգներին ու խոստումներին: Նրանք դեռեւս նախընտրում են հավատալ նախագահ ալ-Ասադի վարչակարգի վերջնական հաղթանակին: Հետաքրքրական է նաեւ, որ նույնիսկ սիրիահայության կառավարամետ ընթացքը քննադատող սակավաթիվ հայ ձայները (սոցիալական ցանցերում գրառումներ կատարող սիրիահայ առանձին երիտասարդներ, այլեւս երկրից հեռացած նախկին սիրիահայեր եւ երեւանում մի քանի երիտասարդ արաբագետներ) իրենց մեկնաբանություններում շեշտը դնում են ո՛չ թե ընդդիմադիր հոսանքների ժողովրդավարական ներուժի, այլ՝ այն վտանգների վրա, որին սիրիահայությունը կարող է բախվել ընդդիմության հնարավոր հաղթանակի դեպքում, եթե վերջիններս ձգտեն վրեժխնդիր լինել ալ-Ասադի վարչակարգի համակիրներից:

Սիրիական ընդդիմության նկատմամբ հայության տարբեր հատված-

ների այս վերապահ կեցվածքը կարելի է բացատրել այն մտավախությամբ, որ գոյություն ունի սիրիական խայտաբղետ ընդդիմության կարեւոր բաղադրիչ համարվող «Մուսուլման եղբայրներ» սուննիական քաղաքական հոսանքի նկատմամբ: Վերջինիս իշխանության գալու դեպքում հնարավոր է սահմանափակվեն Սիրիայի ոչ սուննի փոքրամասնությունների կրոնական ու մշակութային ազատությունները:

Հատկանշական է, որ Թունիսում եւ Եգիպտոսում վարչակարգերի տապալումից հետո խորհրդարանական առաջին ընտրությունների արդյունքում հաղթանակ տարան հենց իսլամիստական քաղաքական կուսակցությունները: Այս իրողությունն, ի դեպ, մտավախություն առաջացրեց թե՛ սիրիահայության եւ թե՛ Մերձավոր Արեւելքի այլ քրիստոնյաների շրջանում: Վատ նախադեպ է նաեւ Իրաքի պարագան, ուր Սադամ Հուսեյնի բասսական վարչակարգի տապալումից հետո շեշտակիորեն ավելացան քրիստոնեական հաստատությունների, ինչպես նաեւ քրիստոնյա հոգեւորականների եւ անհատների դեմ բռնարարքները՝ խթանելով Իրաքից քրիստոնյաների (ներառյալ՝ հայերի) մեծածավալ արտահոսքը:

Այսուհանդերձ, պետք է նկատի ունենալ, որ սիրիահայերը որեւէ լուրջ լծակ չունեն իրենց երկրում քաղաքական զարգացումների վրա ազդելու համար: Նրանք, ի վերջո, պիտի դառնան այդ զարգացումների դրական կամ բացասական արդյունքների կրողները:

Ներկա դրությամբ, անհնար է պատկերացնել Սիրիայի իշխանությունների եւ արմատական ընդդիմության միջեւ փոխզիջումային որեւէ համաձայնության ձեւավորում: Երկու ճամբարներն էլ նպատակադրված են կործանելու իրենց հակառակորդին: Փոխզիջումային լուծում սիրիացիներին կարող են պարտադրել միջազգային մակարդակում ազդեցիկ պետությունները (առաջին հերթին՝ ԱՄՆ-ը եւ Ռուսաստանը)՝ նախ իրենց միջեւ համաձայնության գալով, եւ ապա այն պարտադրելով սիրիական հակամարտ կողմերին: Նույնիսկ այս դեպքում շատ սիրիահայեր փոխհամաձայնությունը պիտի դիտարկեն որպես փխրուն կամ ժամանակավոր եւ ցանկանան երկրից հեռանալ՝ նախքան հնարավոր արյունահեղության նոր հանգրվանի սկիզբը:

Սիրիայում քաղաքական ու ռազմական զարգացումները մեծ մասամբ կախված են օտարերկրյա միջամտության հավանականությունից: Դժվար թե ընդդիմադիրները կարողանան տապալել նախագահ ալ-Ասադի վարչակարգը՝ առանց արտերկրից ռազմական օժանդակության: Այն, ինչ կատարվեց Լիբիայում, որտեղ ապստամբները պարտության մատնեցին Մուամար Քադաֆիին միայն ՆԱՏՕ ռազմական աջակցության շնորհիվ, առայժմ բացառվում է Սիրիայում, քանի որ Ռուսաստանը դեռ աջակցում է

ալ-Ասադին եւ շարունակում է ՄԱԿ-ում օգտագործել վետոյի իր իրավունքը՝ արգելելու համար օտարերկրյա միջամտության օրինականացումը: Սակայն Ռուսաստանը կարող է ապագայում, կամա թե ակամա, նախագահ ալ-Ասադի հաշվին գործարքի մեջ մտնել ԱՄՆ-ի հետ, կամ ԱՄՆ-ը կարող է շրջանցել ՄԱԿ-ը եւ Սիրիա ներխուժել ՆԱՏՕ կամ միջազգային որեւէ՝ թեկուզ ժամանակավոր դաշինքի անվան տակ: Այդ պարագայում, ալ-Ասադի վարչակարգը, ի վերջո, ուժերի անհավասարության հետեւանքով կարող է ընկրկել: Նրան հաջորդող սիրիական իշխանությունները՝ գոնե սկզբնական շրջանում, իրենց շատ պարտավորված պիտի զգան Թուրքիայի հանդեպ, որ ներկայումս օթեւան է տրամադրել արտասահմանում գտնվող սիրիական ընդդիմադիր ղեկավարությանը եւ տարբեր ձեւերով սատարում է նրանց: Սիրիայում Թուրքիայի ազդեցության թեկուզեւ ժամանակավոր, բայց շեշտակի աճը բացասական ազդեցություն պիտի ունենա սիրիահայ համայնքի ունեցած ազատությունների, ինչպես նաեւ Հայաստան – Սիրիա երկկողմ հարաբերությունների վրա:

Առանց օտար միջամտության նախագահ ալ-Ասադի հավատարիմ ուժերը, ըստ ամենայնի, պարտության կմատնեն ընդդիմությանը, ինչպես ներկայիս նախագահի հորը՝ Հաֆեզ ալ-Ասադին հաջողվեց ճնշել «Մուսուլման եղբայրներին» 1980-ական թվականների սկզբին: Չկարողանալով հաղթահարել Ռուսաստանի հակազդեցությունը՝ Վաշինգտոնը, Անկարան եւ նրանց արաբ համախոհները, հնարավոր է, հրաժարվեն նախագահ ալ-Ասադին անմիջականորեն տապալելու մտքից՝ փոխարենը Սիրիային ենթարկելով երկարաժամկետ քաղաքական եւ տնտեսական մեկուսացման՝ նման այն իրավիճակին, որի մեջ գտնվում էր Իրաքը 1990-ական թվականներին: Այսպիսի տարբերակը ծանր ազդեցություն կունենա Սիրիայի բնակչության սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա ու կխթանի երկրից դանդաղ, բայց անդառնալի արտագաղթը՝ այդ արտահոսքի մեջ ընդգրկելով նաեւ սիրիահայության ստվար մի հատվածի:

Ըստ իս՝ ավելի հավանական է մեկ այլ տարբերակ, երբ ԱՄՆ-ը եւ իր դաշնակիցները, ի վերջո, հրաժարվեն Սիրիայում լիբիական փորձի նման ուղղակի ռազմական միջամտությունից, բայց դրա փոխարեն շարունակեն սիրիական ընդդիմությանը տարատեսակ ռազմատեխնիկական, անուղղակի եւ մասամբ քողարկված օժանդակություն ցուցաբերել: Փաստ է, որ սիրիական ընդդիմությունը վերջին ամիսներին կարողացավ գոյատևել՝ հակառակ կառավարության կոշտ քաղաքականության: Իսկ սիրիական բանակից հեռացած ընդդիմության համակիր զինվորականները կարողացան կազմել իրենց զորամիավորումները: Եթե վերջիններս շարունակեն դրսից անհրաժեշտ ռազմամթերք եւ տեխնիկական օժանդակություն

ստանալ, Սիրիան կարող է կամաց-կամաց գլորվել դեպի քաղաքացիական պատերազմ, ինչպես դա տեղի ունեցավ Լիբանանում 1975 թվականին: Քանի որ Սիրիայի աշխարհագրական դիրքը ռազմավարական մեծ նշանակություն ունի եվրասիական ցամաքամասի համար, բազմաթիվ ազդեցիկ եւ տարածաշրջանային պետություններ այդ պարագայում ուղղակիորեն կամ անուղղակիորեն կմիջամտեն քաղաքացիական պատերազմին՝ աջակցելով հակամարտող կողմերից որեւէ մեկին:

Դժվար է կամխատեսել, թե ինչ հետագա ընթացք կարող է ունենալ այս ճգնաժամը: Բացառված չէ, որ հարեւան Լիբանանի 1975–1990 թվականների փորձը մասամբ կրկնվի եւ ժամանակի ընթացքում կենտրոնական կառավարությունը թուլանա, ներկայումս կուռ թվացող սիրիական երկու հակամարտ ճամբարները կամաց-կամաց տարրալուծվեն, դրանցում գտնվող տարբեր հոսանքները դառնան ավելի ինքնուրույն եւ Սիրիայի ամբողջ տարածքը վերածվի այլազան, «փոքր պատերազմների» թատերաբեմի: Այդ պարագայում եւս սիրիահայության նշանակալից արտագաղթ տեղի կունենա, ինչպես ժամանակին տեղի ունեցավ Լիբանանում:

– Ինչպե՞ս եք տեսնում Մերձավոր Արեւելքում հայ համայնքների (այդ թվում Սիրիայի) հեռանկարը 21-րդ դարին բնորոշ իրողությունների համատեքստում:

– Արաբական աշխարհի հայ գաղութները մեր այսօրվա ընկալումներին համապատասխան կերպարանք ստացան 1915 թվականի Ցեղասպանության եւ 1921–1922-ին Կիլիկիայի հայաթափման արդյունքում: Չնայած սկզբնական շրջանի բազմաթիվ դժվարություններին, հայ գաղթականները համենատարբար հեշտությամբ համակերպվեցին հյուրընկալ միջավայրին եւ շուտով արաբական աշխարհը նախընտրեցին տարածաշրջանի այլ երկրներից որպես հայապահպանության համար հարմարավետ տեղ: Ասվածի լավագույն ապացույցը Ալեքսանդրեթի սանջակի եւ 1948-ի սահմաններով Իսրայելի հայության ճակատագիրն էր: Երբ այս երկրամասերը դադարեցին արաբական լինել, այնտեղ բնակվող շատ հայեր լքեցին իրենց տները եւ տեղափոխվեցին մոտակա շրջաններ, որոնք սահմանային փոփոխություններից հետո պիտի շարունակեին արաբական գերիշխանության տակ մնալ: Այս մթնոլորտում, երկու աշխարհամարտերի միջև ընկած ժամանակաշրջանում եւ դրանից անմիջապես հետո, արաբական աշխարհի հայության ընդհանուր թվաքանակը շարունակաբար աճ էր արձանագրում:

Իրադրությունը փոխվեց 1950-ական թվականներից սկսած: 1948–49թթ. Իսրայելի դեմ պատերազմում արաբների կրած պարտությունից

հետո արաբական աշխարհում ծավալվեց հեղաշրջումների ալիք, որ սկսվեց Սիրիայից՝ 1949-ին եւ իր վերջնակետին հասավ Լիբիայում եւ Չարավային եմենում՝ 1969-ին: Հասարակության միջին ու ցած խավերից սերած բանակային սպաների կազմակերպած այս հեղաշրջումներն արմատական փոփոխության ենթարկեցին տվյալ պետությունների իշխող վերնախավերի սոցիալ-դասակարգային դիմագիծը: Միաժամանակ, վերջիններիս իրականացրած սոցիալ-տնտեսական բարեփոխումները կրեցին հեղափոխական բնույթ: Սակայն այս հեղաշրջումներն իրականում ճանապարհ հարթեցին կենտրոնացված ու ավտորիտար քաղաքական համակարգերի արմատավորմանը, ուր համարյա տեղ չկար բազմակարծության, ժողովրդավարության եւ ազատ ընտրությունների համար: Արդյունքում՝ քաղաքական իշխանությունը բացառապես կենտրոնացավ երկրի նախագահի, նրա անմիջական շրջապատի, ուժային նախարարությունների եւ անվտանգության մարմինների ձեռքին:

Հեղաշրջումների այս շղթան իր ազդեցությունն ունեցավ Եգիպտոսի, Սիրիայի, Իրաքի եւ Սուդանի հայ գաղութների վրա: Հեղափոխական նոր վարչակարգերի իրագործած բարեփոխումների շրջանակից դուրս մնաց պետության ու կրոնի իրավական փոխհարաբերության հարցը, եւ նշված երկրներում հայությունը շարունակեց պահպանել Օսմանյան կայսրությունից ժառանգված իր կրոնական ու համայնքային կառույցներն ու հավաքական իրավունքները: Սակայն պետական գաղափարախոսություն դարձած արաբական ազգայնականության ոգով կատարված վարչական, կրթական ու մշակութային նորամուծությունները, ինչպես նաեւ պետական կապիտալիզմին ու մասամբ սոցիալիզմին բնորոշ վերափոխումները տնտեսության ոլորտում պատճառ դարձան Եգիպտոսում, Իրաքում եւ ավելի քիչ չափով՝ Սիրիայում հայության կրթական, հրատարակչական ու մշակութային ազատությունների սահմանափակմանն ու արտագաղթի նոր ալիքի ձեւավորմանը /փոքր ծավալներով՝ դեպի Խորհրդային Հայաստան, բայց ավելի շատ՝ դեպի արեւմտյան երկրներ (հատկապես՝ ԱՄՆ, Կանադա եւ Ավստրալիա), իսկ Սիրիայի պարագայում՝ նաեւ դեպի հարեւան Լիբանան/:

1950-ականները դարձան անկյունադարձային, քանի որ բնակչության այս տեղաշարժերը սկիզբ դրեցին մի նոր իրողության, որի արդյունքում արաբական երկրները դադարեցին սփյուռքահայերին համախմբող աշխարհագրական միջավայր հանդիսանալուց եւ, ընդհակառակը, վերածվեցին երկրագնդի տարբեր շրջաններ հայություն արտահանող մի երկրամասի: 1960-ականներից հետո վերաաշխուժացած ԱՄՆ-ի, Կանադայի եւ մասամբ՝ Ֆրանսիայի եւ Անգլիայի հայ գաղութները, ինչպես նաեւ

Ավստրալիայի նորաստեղծ հայ համայնքը շատ բան պարտական են եգիպտոսից, Սիրիայից եւ արաբական այլ երկրներից այնտեղ հանգրվանած հայությանը: Ավելի ուշ, Լիբանանի հայ գաղութն էլ նուրազավ երկրում 15 տարի տեւած քաղաքացիական պատերազմի հետեւանքով, եւ արտագաղթած լիբանանահայության մեծ մասը նույնպես հանգրվանեց Յուսիսային Ամերիկայում, Ֆրանսիայում եւ Ավստրալիայում: Առավել էւս, ի տարբերություն նախապես հիշատակված Ալեքսանդրեթի ու Պաղեստինի նախադեպերի, Թուրքիայից, Իրանից եւ վերջապես հետխորհրդային Չայաստանից արտագաղթը, շատ չնչին բացառություններով, շրջանցեց արաբական աշխարհը: Արտագաղթողների համար արաբական աշխարհի անհրապուրիչ վայր դառնալու գլխավոր պատճառը վերջին տասնամյակներին այս տարածաշրջանի ավելի տնտեսական լճացումն է, քան արդեն հիշատակված արաբական ազգայնականության եւ իսլամական հոսանքների աճը կամ քաղաքական սահմանափակումները:

2010 թվականի վերջից ծավալված այսպես կոչված «արաբական գարունը» իր տարողությամբ կարող է համարժեք դառնալ 1950-60-ականների հեղաշրջումների թողած հավաքական ազդեցությանը: Արաբական շատ երկրներում այս հեղաշրջումների հետեւանքով երկար տասնամյակներ նախագահական աթոռին բազմած ղեկավարները, մեկը մյուսին հետեւելով, նախապատրաստվում էին երկրի առաջնորդի աթոռը «կտակել» իրենց որդիներին, երբ ավելի քան մեկ տարի առաջ թափ առավ ստեղծված իրավիճակի դեմ բողոքների ալիքը: Մինչ այդ, 2000 թվականին Բաշար ալ-Ասադն իր մահացած հորը՝ Յաֆեզին փոխարինելով, դարձավ այս յուրահատուկ «սերնդափոխության» միակ ավարտված հաջող օրինակ, ինչն արաբ սոցիոլոգներն սկսեցին անվանել «հանրաթագավորություն» (արաբերեն՝ «գումալաքիյա», ստեղծված՝ «գումիուրիյա» = «հանրապետություն» եւ «մալաքիյա» = «թագավորություն» տերմինների համադրումից):

Դեռեւս շարունակվող նորագույն այս ճգնաժամի հետեւանքով սիրիահայության գլխին կանգնած վտանգը, հնարավոր է, դառնա արաբական աշխարհի հայության շարունակական հայաթափման հերթական, բայց դժբախտաբար, կարելու մի նոր օղակը: Եթե իրականանա նախորդ հարցմանն ի պատասխան թվարկված տարբերակներից որեւէ մեկը, Չայաստանի տնտեսությունն այսօր ի վիճակի չի լինելու ընդունելու եւ տեղ տալու Սիրիայից մեծ թվով ներգաղթողների՝ մանավանդ միջին եւ ցած խավերից: Նույնիսկ նրանք, ովքեր Չայաստան կգան, այնտեղից ի վերջո կփորձեն մշտական բնակության տեղափոխվել հյուսիսամերիկյան կամ արեւմտեվրոպական որեւէ երկիր կամ Ավստրալիա:

Հատկապես Հալեպի հայ գաղութի նոսրացումը կարող է դեպի արեւմտյան երկրներ արտագաղթի նոր ալիք խթանել նաեւ հարեւան Լիբանանում, քանի որ Բեյրութի, Դամասկոսի եւ Հալեպի հայ համայնքներն իրար հետ կապված են բազմաթիվ՝ մշակութային եւ նույնիսկ ազգակցական կապերով: Այս դեպքում, Սիրիայից քրիստոնյա տարբեր համայնքների արտագաղթը բացասական ազդեցություն կարող է ունենալ Լիբանանի քրիստոնյա բնակչության (ներառյալ՝ հայերի) վրա՝ թուլացնելով նրա ինքնավստահությունը սեփական ուժերի նկատմամբ եւ կապվածությունն իր երկրին:

Սիրիահայ գաղութի նոսրացումը կարող է միաժամանակ թուլացնել վերջին մի քանի տասնամյակներում Քուվեյթի, Արաբական Միացյալ Եմիրությունների, Քաթարի եւ Օոցի արաբական այլ միապետությունների մեջ նորաստեղծ հայ գաղութներին: Այս համայնքները ստեղծվել են առավելապես Լիբանանից, Սիրիայից եւ Իրանից աշխատանքի ավելի լայն հնարավորություններ փնտրող հայերի մեկտեղումով, եւ քանի որ քրիստոնյաների համար գրեթե անհնար է այս երկրներում քաղաքացիություն ստանալ եւ վերջնականապես այնտեղ արմատավորվել, Օոցի երկրներում հաստատված հայերը կանոնավոր կապ են պահում իրենց ծննդավայրերի հետ: Իսկ եթե հայաթափվի ծննդավայրը, ներկայումս Օոցի շրջանում բնակվող եւ աշխատող հայերը եւս կարող են լրջորեն մտածել արաբական աշխարհը վերջնականապես լքելու մասին:

Ի վերջո, Սիրիայի հայության նոսրացումն ավելի պիտի ծանրացնի արեւմտահայերենի գոյատեւման եւ արեւմտահայ մշակույթի հետագա զարգացման հարցը: Հալեպը վաղուց եւ իրավամբ համարվել է ավանդական (այսինքն՝ գլխավորաբար արեւմտահայ) սփյուռքի թթմորը, իսկ Սիրիայից հեռացողները եւ հատկապես նրանց զավակներն ու թոռներն աստիճանաբար պիտի դադարեն արեւմտահայերեն խոսելուց եւ արեւմտահայերենով ստեղծագործելուց՝ որդեգրելով իրենց հյուրընկալ երկրների լեզուները՝ անգլերենը կամ ֆրանսերենը եւ նույնիսկ Հայաստանի պարագայում՝ արեւելահայերենը... Արաբական աշխարհի հայաթափումով աշխարհի երեսին պիտի մնան շատ քիչ աշխարհագրական միջավայրեր, ուր հայերն ավանդաբար ու միասնաբար խոսում են արեւմտահայերեն:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՇՈՒՐՋ *Ռուբեն Մելքոնյան*

Տարբեր առումներով բավական բարդ իրավիճակում գտնվող Թուրքիայի հայության շրջանում, հատկապես վերջին տարիներին, նկատվում են նոր զարգացումներ, որոնք ձեռք են բերում հետաքրքիր ուղղվածություն: Ավելորդ չէ նշել, որ ներկայումս Թուրքիայում տեղի ունեցող գաղափարախոսական եւ քաղաքական պայքարն ազգային-կրոնական փոքրամասնություններին որոշ սահմանափակ հնարավորություններ է ընձեռում, եւ բացի այդ, հենց փոքրամասնությունների շրջանում ինքնագիտակցության մակարդակի բարձրացում է նկատվում: Այս ամենը հանգեցնում է նրան, որ Թուրքիայի հայության տարբեր խմբերում ի հայտ են գալիս ինքնակազմակերպման նոր եւ ուշագրավ երեւույթներ: Հետաքրքիր է դիտարկել, որ ինքնակազմակերպման դրսեւորումներ տեղի են ունենում ինչպես քրիստոնյա, այնպես էլ կրոնափոխ եւ արդեն կրոնադարձ հայության շրջանում: Հատկապես վերջիններիս պարագայում խնդիրն ունի մի քանի շերտ, եւ կարող ենք փաստել, որ ինքնության, ազգային ակունքների վերագնահատման անհատական փորձերն այսօր առավել «ինստիտուցիոնալ» բնույթ ստանալու միտումներ են դրսեւորում:

Թուրքիայի հայության ինքնակազմակերպման այդպիսի դրսեւորումներից պետք է համարել վերջին շրջանում ինքնաբուխ, երբեմն էլ թուրքական իշխանությունների լուռ համաձայնությամբ ստեղծվող հայրենակցական միությունները: Հայտնի է, որ հայրենակցական միությունները բավական մեծ տարածում ունեն հայաստանյան եւ սփյուռքի իրականությունում, սակայն հենց ստանբուլահայերի խոստովանությամբ՝ այդպիսի կազմակերպությունները որոշակիորեն նորություն են իրենց համար: Ընդհանրապես տարիներ առաջ սկիզբ առած գործընթացն այսօր զարգացման ուղի է բռնել, եւ կարելի է ասել, որ հայրենակցական միությունները հետզհետե սկսում են ավելի լուրջ դեր խաղալ թուրքահայ իրականության մեջ: Այսպես, մի քանի տարի առաջ ստեղծվել է «Մուսա լեռան հայրենակցական միությունը», այնուհետեւ՝ «Մալաթիայի հայերի միությունը», որոնք քրիստոնյա հայության կամ, այսպես կոչված, պաշտոնական համայնքի անդամներից բաղկացած կազմակերպություններ են:

Հայրենակցական միությունների կազմավորման խնդրի համատեքստում բավական նշանակալի զարգացում կարելի է համարել «Սասունցիների միության» ստեղծումը, քանի որ դրա կազմի մեջ կան ինչպես քրիստոնյա, այնպես էլ մեծ թվով կրոնափոխ եւ կրոնադարձ հայեր: Սա Թուրքիայի կրոնափոխ հայերի խմբեր ընդգրկող, թերեւս, առաջին հասարակական կազմակերպությունն է: Նկատենք նաեւ, որ այս կազմակերպությունը եւ վերջինիս նախագահ Ազիզ Դադջըն մի քանի համարձակ հայտարարություններ ու քայլեր արեցին Սասունում եւ հարակից տարածքներում հայկական պատմամշակութային ժառանգության պահպանման ուղղությամբ:

Սասունցիների միությանը հաջորդեց «Դերսիմի հայերի միության» ստեղծումը՝ դերսիմցի կրոնադարձ հայ Միհրան Փրկիչ Գյուլթեքինի նախագահությամբ: Այս կազմակերպությունը թե՛ պոլսահայ, թե՛ թուրքական եւ թե՛ հայաստանյան լրատվական դաշտում լայն անդրադարձների արժանացավ: Դերսիմահայերը նույնպես առաջնային են համարում պատմամշակութային ժառանգության պահպանման խնդիրները, սակայն ավելի համարձակ հայտարարում են, որ միությունը ներառում է Դերսիմի տարածքում բնակվող բռնի կրոնափոխված, հաճախ ալեւիականություն ընդունած հայությանը: Հարկ է շեշտել նաեւ, որ հատկապես դերսիմցի հայերի շրջանում բավական հաճախ հանդիպում են իրական հայկական ինքնության վերադարձի կամ դրա մասին բարձրաձայնելու դեպքեր, որոնք լայնորեն տեղ են գտնում թուրքական եւ արտասահմանյան մամուլում:

Նկատենք նաեւ, որ քրիստոնյա հայերից կազմված հայրենակցական միությունները եւս ակտիվորեն հետաքրքրվում են բռնի իսլամացված հայերի խնդիրներով, եւ, օրինակ, «Սալաթիայի հայերի միությունը» վերջերս հայտարարեց, որ բազմաթիվ այլ միջոցառումներին զուգահեռ, պատրաստվում է կրոնափոխ հայերի հետ բազմակողմանի աշխատանք տանել:

Վերջերս Թուրքիայի հայկական հայրենակցական միությունների շարքը համալրվեց եւս մեկով. ստեղծվեց համշենցիների առաջին հայրենակցական միությունը՝ բավական խոսուն անվամբ՝ «Հատիկ»: Իմիջիայլոց, այս անվանումը հարուցել է թուրքական համապատասխան կառույցների տարակուսանքը, եւ միության նախաձեռնողները դա ներկայացրել են որպես թուրքերեն հապավում: Հարկ է նկատել նաեւ, որ համշենցիների հայրենակցական միության մեջ ընդգրկված են ինչպես իրենց հայկական էթնիկ պատկանելությունն ընդունողներ, այնպես էլ դա արտաքուստ մերժողներ: Համշենահայերի հայրենակցական միության

նախաձեռնողների խմբի մեջ հատկապես ակտիվ են համշենական «Վոլա» երաժշտական խմբի հիմնադիր Յիքմեթ Աքչիչեքը եւ փաստաբան Քյամիլ Մութին: Միության մեջ ընդգրկված են համշենցիներ Ստամբուլից, Չամշենից, Արդվինից, Անկարայից: Ինչպես հայտարարում են կազմակերպիչները, միության ստեղծման նպատակը համշենական մշակույթի եւ լեզվի պահպանումն է, որպեսզի թույլ չտան, որ *«համշենական լեզուն ու մշակույթը կանաց-կանաց անհետանան ուրբանիզացիային զուգահեռ»*:

Չեռաքրքիր է, որ հենց իրենք՝ համշենահայերը, որոշակիորեն ուշացած են համարում իրենց միության ստեղծումը, քանի որ Սեւ ծովի տարածաշրջանի այլ ժողովուրդներ, օրինակ՝ մուսուլման վրացիները (գյուրջյու), լազերն արդեն վաղուց ունեն նմանատիպ կառույցներ:

Ինչպես մնացած հայրենակցական միությունները, համշենցիները եւս շեշտն առավելապես դնում են մշակույթի, լեզվի պահպանման վրա, սակայն, այնուամենայնիվ, չեն կարող խուսափել ինքնության եւ պատմական հարցերից: Այս միությունը եթե դառնա հարթակ Չամշենի բարբառի, մշակույթի ուսումնասիրման համար, ապա դա անպայմանորեն հանգեցնելու է նաեւ համշենցիների էթնիկ ծագման հարցի քննարկմանը: Այս առիթով միության կազմակերպիչներից Քյամիլ Մութին նկատում է. *«Նախ պետք է անհետացող մշակույթս, վերացող լեզուս պահպանեն, որպեսզի պատմությունս ուսումնասիրեն»*: Գաղտնիք չէ, որ Թուրքիայի համշենցիները, գտնվելով թուրքական պետական մեքենայի եւ քարոզչության բիրտ ճնշման տակ, մեծ մասամբ խուսափում են անդրադառնալ եւ բացահայտ ընդունել իրենց հայկական ծագումը: Ավելին՝ համշենցիների շրջանում իրենց հայկական կամ «համշենական» ծագումն ընդունողների կողքին կան անգամ մարդիկ, որոնք հայտարարում են, թե իրենք թուրք են: Սակայն համշենական մշակույթի եւ Չամշենի բարբառի նկատմամբ նրանք գրեթե բոլորն ունեն նույնական վերաբերմունք եւ ձգտում են պահպանել այդ ամենը:

Չամշենահայերի «Չատիկ» միությունը, առաջնային հռչակելով համշենական մշակույթի եւ լեզվի պահպանումը, կարող է համախմբել վերը նշված բոլոր խմբերը, եւ այս առումով նմանատիպ միության հիմնադրումն, իրոք, պետք է համարել լուրջ առաջընթաց: Նկատենք նաեւ, որ համշենական մշակույթը եւ բարբառը կրողները, ծանոթանալով ընդհանուր հայկական մշակույթի առանձին տարրերի եւ հայոց լեզվի հետ, անպայմանորեն բախվելու են իրենց էթնիկ ծագման հարցին, ինչի պատասխանն այդ պարագայում ավելի հստակ է լինելու նրանց համար:

Պետք է կարծել, որ Թուրքիայի վարած էթնոքաղաքականության հետեւանքով ձուլման դատապարտված տարբեր ժողովուրդներ նմանատիպ կառույցների ստեղծմամբ փորձում են, երբեմն ենթագիտակցորեն, հակադարձել թուրքական ճնշումներին: Կարելի է ենթադրել, որ Թուրքիայի հայության տարբեր խմբերի հիմնադրած հայրենակցական միությունները խնդիր են հետապնդում լեզվի, պատմամշակութային ժառանգության պահպանման հետ կապված հարցերի վերհանման միջոցով վերագտնել հայկական ինքնությունը: Թուրքիայի հայության շրջանում ինքնակազմակերպման նման դրսեւորումները հուսադրող են եւ կարող են հիմք հանդիսանալ «պաշտոնական» համայնքում ազգային արժեքների պահպանման, իսկ ուժացած հայության շրջանում՝ հայկականությանը վերադարձի համար:

**ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՏԱՐԻՆ ԻՐԱՆՈՒՄ
ԵՎ ԻՐԱՆԱ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԲԱԽՈՒՄԸ
Սեւակ Սարուխանյան**

Սույն թվականի մարտի 2-ի խորհրդարանական եւ 2013-ի նախագահական ընտրություններն Իրանում կարելուր նշանակություն ունեն ոչ միայն Իրանի Իսլամական Հանրապետության ներքաղաքական կյանքի համար, այլեւ Իրան – ԱՄՆ ռազմական բախման էական ազդակ կարող են հանդիսանալ:

Ընտրությունների շեմին

Ինչպես եւ սպասվում էր, գալիք խորհրդարանական ընտրություններն Իրանում անցնելու են առանց հիմնական եւ արմատական ընդդիմադիր ուժերի մասնակցության, որոնք դեռեւս հունվարին պաշտոնապես հայտարարեցին, որ բոյկոտելու են մարտի 2-ի ընտրությունները: Նախընտրական պայքարին մասնակցող ընդդիմադիրները, որոնք կազմում են ընդհանուր թեկնածուների 10 տոկոսը, միավորվել են 2 ընդդիմադիր կոալիցիաներում՝ Իսլամական Իրանի մասնակցության ճակատում եւ Ազգային վստահության ճակատում: Չնայած այս միավորումները հանդես են գալիս իշխանությունների քննադատությամբ, նրանց հայացքները կարելի է միայն պայմանականորեն ընդդիմադիր համարել, քանի որ դրանցում չկան ընդհանուր պետական քաղաքականության եւ կառավարման համակարգի փոփոխության պահանջներ:

Դժվար թե կարելի է ակնկալել, որ ընդդիմադիր հայացքներ ունեցող հասարակության հիմնական մասը պաշտպանի այս երկու դաշինքներին, քանի որ դրանցում ընդդիմության կարկառուն ներկայացուցիչներ չկան: Մյուս կողմից՝ իրանական ակտիվ ընդդիմությունն իր համակիրներին կոչ է անում ընդհանրապես չմասնակցել ընտրություններին՝ դրանով իսկ փորձելով ապագա խորհրդարանը զրկել լեգիտիմությունից:

Բավական հետաքրքիր գործընթացներ են տեղի ունենում նաեւ պահպանողականների ճամբարում, որտեղ դիրքերի լուրջ թուլացում է արձանագրել Իրանի մեջլիսի ներկայիս խոսնակ, դասական պահպանողականների ներկայացուցիչ Ալի Լարիջանին: Փետրվարի սկզբին ծայրահեղ պահպանողականներին պատկանող մի շարք լրատվա-

միջոցներ եւ կայքեր նյութեր հրապարակեցին, որ Ալի Լարիջանին վերջին տարիներին ստեղծել է մեծ ունեցվածք, անշարժ առետրային հսկայական գույքի սեփականատեր է եւ խառնված է բավական կասկածելի տնտեսական, հիմնականում՝ պետական ունեցվածքի սեփականաշնորհման գործարքների մեջ:

Անգամ տեղեկատվություն հրապարակվեց այն մասին, որ պետության բարձրագույն հոգեւոր իշխանություններն արգելել են Ալի Լարիջանին մասնակցել խորհրդարանական ընտրություններին, ինչը, սակայն, հետագայում հերքվեց Լարիջանի կողմից: Ամենայն հավանականությամբ, ներկայումս ակտիվ աշխատանք է սկսվել այն ուղղությամբ, որպեսզի գալիք խորհրդարանի խոսնակի պաշտոնում Ալի Լարիջանի վերընտրման շանսերը նվազեն: Բացի այդ, Լարիջանին առաջօր համարվում է 2013թ. նախագահական ընտրությունների հնարավոր թեկնածու, եւ նրա դեմ տարվող հակաքարոզչությունը նպատակ ունի զրկել նրան ընտրություններին սեփական թեկնածությունն առաջադրելու շանսից: Պետք է ընդգծել նաեւ, որ եթե դեռ անցած տարվա հոկտեմբերին Իրանի հոգեւոր առաջնորդ Ալի Խամենեյի՝ նախագահի պաշտոնը վերացնելու եւ այն խորհրդարանի կողմից ընտրվող վարչապետի պաշտոնով փոխարինելու առաջարկությունն ընդունվի, ապա խորհրդարանի խոսնակի դիրքը եւ պաշտոնը կարող են ազդեցություն ունենալ վարչապետի ընտրման գործընթացում: Դրանով իսկ Ա.Լարիջանի հնարավոր «տապալումը» նշանակում է, որ նա եւ նրան աջակցող ուժերը չեն կարող ակտիվորեն ազդել իրանական գործադիր իշխանության ձեւավորման վրա:

Նշենք, որ խորհրդարանական ընտրություններին մասնակցելու համար դիմում է ներկայացրել 4.877 իրանցի, որոնցից միայն 2.700-ի պատգամավոր դառնալու համապատասխանությունն է հաստատվել Պահապանների խորհրդի կողմից, եւ հենց 2.700-ն են գրանցվել որպես թեկնածուներ: Որոշ թեկնածուներ դատական կարգով բողոքարկել են իրենց չգրանցելու որոշումը, սակայն անգամ որոշ գործերի վերանայման դեպքում լուրջ փոփոխություններ թեկնածուների թվաքանակի մեջ չեն լինի:

Ինչպես նշում են իրանական լրատվամիջոցները, խորհրդարանական ընտրությունների քարոզչությունը քաղաքներում լրջորեն սահմանափակված է անվտանգության ծառայությունների կողմից, քանի որ Իրանում ակնկալում են, որ զանգվածային հանդիպումները կարող են օգտագործվել ահաբեկչական գործողությունների կամ սադրանքների նպատակով, որոնք վերջին տարվա ընթացքում ավելացել են՝ կապված իրանական Բելուջիստանում եւ Քուրդիստանում զինված անջատողականների ակտիվացման հետ:

Այն, որ իրանական իշխանություններն ակնկալում են լուրջ սադրանքներ եւ հնարավոր ապակայունացում ընտրությունների ժամանակ, կասկած չի հարուցում: Դրա մասին են վկայում թե՛ անվտանգության ուժերի հսկողության ուժեղացումը խոշոր քաղաքներում, թե՛ պետական պաշտոնյաների հայտարարությունները: Հունվարի 24-ին Իրանի հետախուզության նախարար Հեյդար Մուլեհիին հայտարարեց, որ Արեւմուտքը լրջորեն իրադրության ապակայունացում է պատրաստում Իրանում, ինչն ընդգրկում է հետեւյալ գործողությունները.

- քարոզչության միջոցով քաղաքական տարածայնությունների ընդգծում եւ հակասությունների խորացում քաղաքական համակարգում,
- ընտրական գործընթացի թափանցիկության վերաբերյալ կասկածների քարոզում երկրում եւ երկրից դուրս,
- քաղաքական բանավեճի տեղափոխում փողոց,
- անվստահության մթնոլորտի ստեղծում,
- տնտեսական պատժամիջոցների շնորհիվ երկրի եւ հասարակության սոցիալական վիճակի բարդացում:

Մեր կողմից հավելենք նաեւ ամերիկյան ռազմուժի կենտրոնացումը Պարսից ծոցի շրջանում, ինչն իրանական ընդդիմության ամենաազդեցիկ մասի համար հոգեբանական ֆոն է ստեղծում եւ կարծես թե «համոզում», որ հեղափոխություն իրականացնելու հնարավոր փորձը կարող է լուրջ ռազմական աջակցություն ստանալ Միացյալ Նահանգների կողմից:

ԿԼԻՆԻ՞ արդյոք բախում

Իրանում տեղ գտած գործընթացներն առավել կարեւոր են նաեւ Միացյալ Նահանգների համար, որն առաջիկա մեկ տարում երեւի թե առաջին լուրջ հնարավորությունն է ստացել իրանական դիրքերին հարված հասցնելու համար: Սա պայմանավորված է մի քանի հանգամանքներով.

1. Սոցիոլոգիական հարցումները ցույց են տալիս, որ ամերիկյան բնակչության 48%-ը կողմ է, որ Միացյալ Նահանգներն Իրանին ռազմական հարված հասցնի: Սակայն, եթե հետազոտությունը կատարվեր ավելի խորքային ձևով, մեր խորին համոզմամբ, կպարզվեր, որ նման հակաիրանական մոտեցման հիմնական պատճառն Իրանի նախագահ Մ.Ահմադինեժադի հանդեպ վերջին յոթ տարիներին իրականացված հակաքարոզչությունն է: Իրանի նախագահին իր ելույթներում մի քանի անգամ լուրջ առիթներ է տվել, որպեսզի ամերիկյան քարոզչությունը նրան ներկայացնի որպես քաղաքակրթության թշնամի: Սակայն մեկ տարի հետո Ահմադինեժադը լքելու է պաշտոնը, եւ Իրանի հաջորդ

նախագահը կարող է ավելի ընդունելի լինել արեւմտյան հասարակության համար: Նախագահի աթոռին հավակնող հիմնական թեկնածուն՝ Թեհրանի քաղաքապետ Մ.Ղալիբաֆը, ընդհանրապես արեւմտյան տիպի առաջնորդ է, եւ նրա նախագահության դեպքում Արեւմուտքը դժվար թե ներքին աջակցություն ստանա Իրանին հարվածելու համար:

2. Պարզ չէ, թե ինչ ճակատագիր կունենան պատժամիջոցներն Իրանի դեմ: Այսօր միջազգային հանրությունը կարծես թե ցույց է տալիս, որ պատժամիջոցների առավելագույնն արդեն իսկ օգտագործված է. ակնհայտ է, որ Չինաստանն ու Ռուսաստանը ՄԱԿ ԱԽ-ում ավելի լուրջ պատժամիջոցների կիրառում Իրանի դեմ թույլ չեն տա: Այսպիսով, տնտեսական ճանապարհով Իրանին էլ ավելի ճնշելն արդեն իսկ սպառնում է իրեն:

3. Այն, ինչ այսօր տեղի է ունենում Սիրիայում, լրջորեն անհանգստացնում է Իրանին: Եթե Բ.Ասադի իշխանությունը տապալվի, Իրանը կկորցնի իր հիմնական դաշնակցին տարածաշրջանում: Սակայն, եթե սիրիական իշխանություններին հաջողվի պահպանել իշխանությունը եւ ճնշել ընդդիմությանը, ապա Իրանը նորից կվերականգնի թուլացող դիրքերն Իսրայելի սահմանին: Նման պարագայում ամերիկյան հնարավոր հարձակումն Իրանի վրա կարող է հանգեցնել նոր խոշոր տարածաշրջանային պատերազմի, որին մասնակից կլինեն ոչ միայն Իրանն ու Միացյալ Նահանգները, այլ նաեւ Սիրիան, Իսրայելը, Լիբանանը եւ անգամ Եգիպտոսը, որտեղ օրեցօր իշխանությունում դիրքերն են ամրապնդում Իսրայելի հետ նոր հակամարտություն ակնկալող «Մուսուլման եղբայրները»: Լայնածավալ տարածաշրջանային հակամարտությունն ուղղակիորեն կազդի նաեւ Իրաքի եւ Աֆղանստանի իրավիճակի վրա, որտեղ ձեւավորված պայմանական stasus quo-ն հավանաբար Վաշինգտոնին հարմար միակ ձեռնտու դրությունն է: Նման զարգացումները կարող են Միացյալ Նահանգների համար անկառավարելի իրավիճակ ստեղծել ողջ Մերձավոր Արեւելքում:

Սակայն հարցն այն է, թե որքանով է Վաշինգտոնը պատրաստ ռազմական ներխուժում իրականացնել Իրան կամ օդային հարվածներով ոչնչացնել իրանական ռազմական եւ միջուկային օբյեկտները: Չնայած նման պատրաստվածության մասին շրջանառվող տեսակետներին՝ բազմաթիվ հեղինակավոր կառույցներ եւ մասնագետներ կարծում են, որ Իրանին հարվածելը մեծ տեղեկատվական բլեֆ է: Մասնավորապես, նման կարծիք ունի վերջին 20 տարիների ընթացքում Մերձավոր Արեւելքի եւ Իրանի գծով ամենահեղինակավոր հետազոտողներից մեկը՝ Շահրամ Չուբինը: Վերջինս կարծում է, որ ոչ Միացյալ Նահանգները, ոչ էլ Իսրայելը

չեն կարող եւ նպատակ չունեն հարվածելու Իրանին: Իսկ իրադրության ներկա սրումը պայմանավորված է զուտ թել Ավիվի ջանքերով, որը փորձում է «շանտաժի ենթարկել» միջազգային հանրությանը. եթե դուք պատրաստ չեք ուժեղացնել ճնշումը Թեհրանի վրա, ապա մենք կհարվածենք Իրանին եւ կլվանանք մեր ձեռքերն այն ճգնաժամային իրավիճակից, որը կստեղծվի նման հարվածից հետո:

Այն, որ Միացյալ Նահանգները նույնպես իր համար լուրջ հիմք է ստեղծում Իրանին հարվածելուց խուսափելու համար, ակնհայտ է: Այս տեսանկյունից հատուկ ուշադրության է արժանի ԱՄՆ պետդեպարտամենտի պաշտոնական ներկայացուցիչ Վիկտորյա Նուլանդի փետրվարի 16-ի հայտարարությունն այն մասին, որ Իրանի միջուկային ձեռքբերումները չափազանցված են. «Մենք որեւէ կարելուր բան չենք տեսնում դրանում: ...Այդ ամենը չափազանցված է: Իրանցիներն արդեն երկար տարիներ հայտարարում են իրենց նվաճումների մասին: Մեր կարծիքով, նման հայտարարություններն ուղղված են ներքին լսարանին»: Սա ոչ այլ ինչ է, եթե ոչ Վաշինգտոնի փորձը՝ խուսափել Իրանին ռազմական հարված հասցնելու «պարտավորությունից», որը ձեւավորվել է վերջին շրջանում «իրանական վտանգի» քարոզչության արդյունքում:

ՔՐԴԱԿԱՆ ԱԿՏԻՎԱՑՈՒՄ ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ **Հայկ Գաբրիելյան**

Իրաքի քրդեր

1970 թվականին Իրաքի քրդերը Սադամ Հուսեյնի վարչակարգից նվաճեցին Քրդստանի ինքնավարության ճանաչումը, սակայն Սադամի բռնած դիրքորոշման պատճառով այդ համաձայնագիրը կյանքի չկոչվեց, քանի որ Հուսեյնն անձամբ երբեք համակրանք չի տածել քրդերի նկատմամբ: Դրան հաջորդող ժամանակահատվածում նա գործնականում ցեղասպանության ենթարկեց քուրդ ժողովրդին՝ նրա դեմ կիրառելով քիմիական զենք (1988): Իրադրությունը փոխվեց 1991թ. գարնանից հետո, երբ ԱՄՆ ղեկավարությամբ գործող միջազգային կոալիցիոն ուժերը պարտության մատնեցին իրաքյան զորքերին:

Արդյունքում՝ Բաղդադը կորցրեց վերահսկողությունը երկրի հյուսիսի նկատմամբ: 1991թ. ապրիլին ՄԱԿ ԱԽ որոշմամբ Իրաքի հյուսիսում ստեղծվեց «անվտանգության գոտի», ինչը միտված էր Իրաքի հյուսիսի քրդերի պաշտպանությանը Սադամ Հուսեյնի ռեժիմի բռնություններից: Փաստորեն, դրանով իսկ ամրապնդվեց Իրաքյան Քրդստանի ինքնավար կարգավիճակը, ինչը Սադամ Հուսեյնի վարչակարգի տապալումից հետո նոր թափ հավաքեց:

Սադամ Հուսեյնի ռեժիմի տապալումը (2003) Իրաքի քրդերին հնարավորություն ընձեռեց օրենսդրորեն ամրագրել ու ընդլայնել մինչ այդ իրենց ձեռք բերած իրավունքներն ու ազատությունները: 2005թ. Իրաքի սահմանադրությամբ ամենալայն իրավունքներ շնորհվեցին Իրաքյան Քրդստանին՝ ընդհուպ մինչև Իրաքի կազմից դուրս գալու իրավունք, եթե կենտրոնական կառավարությունը խախտի իր պարտավորությունները: Նույն թվականին Իրաքյան Քրդստանում անցկացված հանրաքվեով քրդերի 98 տոկոսը կողմ քվեարկեց լիակատար անկախությանը: Սակայն Իրաքյան Քրդստանի իշխանությունները զգուշացան հանրաքվեի արդյունքները կենսագործելուց՝ երկյուղելով տարածաշրջանային աղետներից: 2006թ. սեպտեմբերի 2-ին Իրաքյան Քրդստանի առաջին նախագահ Մասուդ Բարզանիի հրամանով Իրաքյան Քրդստանում արգելվեց Իրաքի դրոշը:

Ներկայումս Իրաքյան Քրդստանն ունի սեփական դրոշ, օրհներգ, սահմանադրություն, նախագահ, խորհրդարան, կառավարություն, դատական մարմիններ, զինված ուժեր, ոստիկանություն, հատուկ ծառայութ-

յուններ, երկու օդանավակայան (Էրբիլում ու Սուլեյմանիայում): Իրաքյան Քրդստանում գործում են մոտ 30 օտար դիվանագիտական ներկայացուցչություններ: Այս ամենը նշանակում է, որ այսօր Իրաքի քրդերն իրենց չեն համարում միացյալ արաբական պետության՝ Իրաքի մի մասը:

2011թ. հոկտեմբերի 16-ին Իրաքյան Քրդստանի խորհրդարանի նախկին խոսնակ Քամալ Քերքուքին Էրբիլում հայտարարեց, որ տարածաշրջանի ղեկավարությունը կարող է հայտարարել քրդական անկախ պետության ստեղծման մասին, եթե խախտվի Իրաքի սահմանադրությունը: Այս հայտարարությունն արվեց այն բանից հետո, երբ Իրաքի վարչապետ (շիա) Նուրի ալ-Մալիքին հայտարարեց սահմանադրության ու երկրի դաշնային կառուցվածքի փոփոխության վերաբերյալ իր պլանների մասին: Դեկտեմբերին Մալիքին փոխնախագահ (սուննի) Թարեք ալ-Յաշեմիին մեղադրեց ահաբեկչական կազմակերպության ստեղծման մեջ՝ քրդերից պահանջելով հանձնել նրան: Մալիքին սպառնաց, որ եթե Բարզանիի վարչակազմը չհանձնի Յաշեմիին կամ էլ թույլ տա նրան մեկնել արտերկիր, ապա դա կհանգեցնի կենտրոնական կառավարության ու Իրաքյան Քրդստանի կառավարության միջև լարվածության մեծացմանը:

Փետրվարի սկզբին իրաքյան El Nexilın լրատվական գործակալությունը հայտնեց, որ Մասուդ Բարզանին Իրաքի արտգործնախարար Յոշիյար Ջեբարիի հետ հանդիպման ժամանակ հայտարարել է, որ մարտի 21-ին (Նովրուզ) իրենք հռչակելու են Իրաքյան Քրդստանի անկախությունը: Բարզանին վստահեցրել է, որ դա համաձայնեցված է Իրաքի նախագահ Ջելալ Թալաբանիի եւ Իրաքի սուննիների հետ: Ըստ Բարզանիի՝ եվրոպական երկրների մեծ մասը դրականորեն է վերաբերվում Իրաքյան Քրդստանի անկախությանը, Անգլիայի եւ Ֆրանսիայի դիրքորոշումը պարզ չէ, ԱՄՆ-ը համարում է, որ Իրաքյան Քրդստանը դեռ պատրաստ չէ այդ քայլին, իսկ Թուրքիայի հետ այդ թեմայով բանակցությունները շարունակվում են: Բարզանին Ջեբարիին խնդրել է դեսպանների մակարդակով աջակցել տվյալ գործընթացին:

Ուշագրավ է, որ այս ամենը տեղի է ունենում Իրաքից ամերիկյան զորքերի դուրսբերումից հետո: Արտաքին ճակատից բացի, Բարզանին պետք է անկախության շուրջ լրջորեն բանակցի նաեւ Իրաքի թուրքմենների հետ, որոնք պահանջում են ազդեցիկ պաշտոններ Իրաքյան Քրդստանի ապագա կառավարությունում, ինչպես նաեւ հավակնում են Քիրքուքի նավթին: Պետք է նշել, որ Իրաքյան Քրդստանն իր նավթի պաշարներով աշխարհում զբաղեցնում է 6-րդ տեղը՝ 45 միլիարդ բարել, իսկ Իրաքում արդյունահանվող նավթի 60 տոկոսը բաժին է ընկնում Իրաքյան Քրդստանին:

Առաջին հայացքից թվում է, թե Թուրքիան պետք է միանշանակ դեմ լինի Իրաքյան Քրդստանի անկախությանը, սակայն իշխող Արդարություն եւ զարգացում կուսակցության պատգամավոր Ջունա Իչթենը ս.թ. հունվարի 11-ին հայտարարեց, որ թեև իրենք աջակցում են Իրաքի տարածքային ամբողջականությանը, բայց եթե հետագայում նույնպես Իրաքում շարունակվի արյունահեղությունը, ապա պաշտոնական Անկարան ոչ միայն դեմ չի լինի Իրաքյան Քրդստանի ստեղծմանը, այլև, ընդհակառակը՝ կաջակցի դրան:

Իրաքյան հակամարտության սրումը մեծ հարված է Թուրքիայի քաղաքական ու տնտեսական շահերին: Այն բանից հետո, ինչ Սիրիան թուրքական ապրանքների տարանցման առջև փակեց իր սահմանները, Իրաքը դարձավ դեպի Մերձավոր Արեւելք թուրքական արտահանման միակ երթուղին: Մինչդեռ Հարավային Իրաքով անցնող այդ երթուղին արդեն իսկ անվտանգ չէ: Թուրք քաղաքագետ Մենսուր Աբգյունը զգուշացնում է, որ Իրաքի հարավով անցնող այդ երթուղու փակման եւ երկրի փլուզման դեպքում Թուրքիան այլ ելք չի ունենա, քան Իրաքյան Քրդստանի անկախության ճանաչումը:

Արդյո՞ք Իրաքյան Քրդստանը մարտի 21-ին կհռչակի իր անկախությունը, արդյո՞ք աշխարհի քարտեզի վրա ի հայտ կգա նոր պետություն, թե՞ ոչ՝ ցույց կտա ժամանակը: Ակնհայտ է, որ Իրաքի քրդերը չեն ցանկանում ներքաշվել սոււննիների ու շիաների միջեւ նոր դիմակայության մեջ՝ ձգտելով որքան հնարավոր է հեռու մնալ նրանցից եւ մնացյալ Իրաքից անջատվել պետական սահմանով: Բացի այդ, առկա է նաեւ տնտեսական գործոնը: Անկախություն հռչակելու դեպքում Իրաքյան Քրդստանը ստիպված չի լինի նավթի վաճառքից ստացված շահույթը կիսել Իրաքի մյուս նահանգների հետ, ինչը կապահովի նրա տնտեսական զարգացումն ու կավելացնի աշխարհաքաղաքական նշանակությունը:

Չի բացառվում, սակայն, որ Բարզանին անկախության մասին հայտարարությունն արել է հարեւան երկրների եւ միջազգային հանրության արձագանքը ստուգելու համար: Պատմական փորձը (1991 եւ 2003) ցույց է տալիս, որ քրդերը կարողանում են օգտագործել բարենպաստ պատմական ժամանակաշրջանները:

Սիրիայի քրդեր

2011թ. սկիզբ առած արաբական հեղափոխությունները, ինչպես նաեւ Ասադի վարչակարգի դեմ ժողովրդական հուզումները մեծապես ոգեւորեցին Սիրիայի քրդերին: Մասնավորապես, ակտիվացան Սիրիայի քրդերի

քաղաքական կառույցները, որոնցից շատերն արգելված էին: 2011թ. ապրիլի 7-ին Ասադը քաղաքացիություն շնորհեց երկրի հյուսիսում բնակվող 300.000 քրդերի: 1962թ. մարդահամարի ժամանակ 120.000 քրդեր դուրս էին մնացել Սիրիայի քաղաքացիների ցանկից, ինչը շարունակվում էր կես դար:

2012թ. հունվարի 28-29-ին Իրաքյան Քրդստանի մայրաքաղաք Երբիլում տեղի ունեցավ Սիրիայի ավելի քան 10 քրդական ընդդիմադիր կուսակցությունների կոնֆերանսը, որին մասնակցում էին 25 երկրներից ժամանած սիրիական քրդերի մոտ 200 ներկայացուցիչներ: Քրդական միակ կուսակցությունը, որը բոյկոտեց այդ կոնֆերանսը, PKK-ն էր, որի 2000 զինյալներ, թուրքական կողմի պնդմամբ, մեկնել են Սիրիա՝ Ասադի ռեժիմին աջակցելու համար:

Կոնֆերանսում Սիրիայի բոլոր քրդերին կոչ արվեց աջակցել ընդդիմադիր Սիրիայի Ազգային խորհրդին՝ պայմանով, որ Սիրիայի քրդերն Ասադի ու ալավիների դեմ պետք է պայքարեն որպես «քրդեր» եւ ոչ թե որպես «սիրիացիներ»: Կոնֆերանսի բոլոր մասնակիցները ստորագրեցին մի փաստաթուղթ, ըստ որի՝ Ասադի ռեժիմի գահընկեցությունից հետո Սիրիայի հյուսիս-արևելքում պետք է ստեղծվի Քրդական ինքնավարություն: Բացի այդ, սիրիացի քրդերը հայտարարեցին, որ ցանկանում են Սիրիայում հանրաքվեի մասնակցել միայն Ասադի գահընկեցությունից հետո, մինչդեռ այն նշանակված է փետրվարի 26-ին:

Սակայն Սիրիայի ազգային խորհուրդը դեռևս պատրաստ է ընդունել միայն այն, որ Ասադների ժամանակաշրջանում ամենաշատը տուժել են հենց քրդերը, եւ նրանց շնորհել մի շարք հիմնական իրավունքներ՝ առանց նրանց ինքնորոշման իրավունքը ճանաչելու:

Ներկայումս Սիրիայի բնակչության 10 տոկոսը կազմող քրդերի շրջանում առկա են տարածայնություններ իրենց հետագա անելիքների շուրջ: Սիրիայի քրդերի մեծ մասը կարծում է, որ իշխող վարչակարգի գահընկեցությունը հնարավորություն կընձեռի հաստատել նոր քաղաքական համակարգ, որը նահանգներին կշնորհի մեծ ինքնավարություն եւ որի ժամանակ կտիրի հանդուրժողականության մթնոլորտ: Նրանք գտնում են, որ սիրիական հեղափոխությունն ավարտված չի համարվի, եթե նոր սահմանադրությունը չերաշխավորի քրդերի իրավունքներն ու նշակութային ինքնավարությունը, ինչպես նաեւ փոխհատուցում չվճարվի նրանց՝ պատմական խտրականության ու հետապնդումների համար: Սիրիայի քրդերի մի մասն էլ կարծում է, որ քրդական հարցը կարելի է կարգավորել նաեւ ներկայիս վարչակարգի պահպանման դեպքում, եթե իրագործվեն համապատասխան բարեփոխումներ:

Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա այն շարունակ շփումների մեջ է սիրիական ընդդիմության հետ եւ ամենայն հավանականությամբ նրա հետ քննարկում է նաեւ Սիրիայի քրդերի հարցը: Թուրքիան, աչքի առջեւ ունենալով դե-ֆակտո անկախ Իրաքյան Քրդստանի օրինակը, չի ցանկանա, որ Սիրիայի քրդերն էլ ձեռք բերեն ինքնավարություն, որը հետագայում կարող է վերածվել անկախության, հնարավոր է նաեւ՝ Իրաքյան Քրդստանի հետ միավորման միջոցով քրդական միացյալ պետության ստեղծման: Դրա համար էլ թուրքական լրատվամիջոցները գրեթե մեկ տարի է, ինչ շարունակ լուրեր են շրջանառում, թե Թուրքիան, կախված իրավիճակից, կարող է բուֆերային գոտի ստեղծել Սիրիայի հյուսիս-արեւելքում ընկած Ղամիշլի քաղաքի մոտ: Այն սեպի դեր կխաղա Սիրիայի, Յյուսիսային Իրաքի ու Թուրքիայի քրդերի միջեւ:

Դա ամենեւին էլ զարմանալի չէ, երբ հիշում ենք նախորդ տարվա մարտին (երբ դեռ չէին վատթարացել Ասադի հետ հարաբերությունները) էրդողանի արած այն հայտարարությունը, թե Թուրքիայի համար մեծ վտանգ են ներկայացնում Սիրիայում բնակվող 1.4 միլիոն քրդերը, եւ եթե Ասադը հրաժարական տա, ապա 1.4 միլիոն սիրիական քրդերը, Թուրքիայում բնակվող 15 միլիոն, Իրանում բնակվող 7 միլիոն եւ Յյուսիսային Իրաքում բնակվող 6 միլիոն քրդերի հետ միասին ոտքի կկանգնեն եւ միացյալ անկախ պետության պահանջ կդնեն:

Թուրքիայի քրդեր

Ա.թ. փետրվարի 15-ին Թուրքիայի 40 նահանգներում ու շրջաններում տասնյակ հազարավոր քրդեր իրականացրին զանգվածային բողոքի ակցիաներ՝ կապված քուրդ առաջնորդ, PKK հիմնադիր Աբդուլա Օջալանի ձերբակալության 13-րդ տարելիցի հետ: Նրանք ընդգծում էին, որ իրենց պահանջածը խաղաղությունն է եւ ազատության շնորհումն Օջալանին: Այդ օրը ոստիկանության հետ գրանցվեցին բազմաթիվ բախումներ, ձերբակալվեց մոտ 90 մարդ: Հարկ է նշել, որ մինչեւ 1999թ. Օջալանի ձերբակալությունը, Թուրքիայի քրդերը պայքարում էին իրենց անկախության համար, իսկ նրա ձերբակալությունից հետո՝ ավելի շատ իրենց քաղաքացիական ազատությունների ու իրավունքների համար:

Թուրքական Zaman թերթը գրեց, որ PKK-ն պլանավորել է մինչեւ Նոյրոնոգ մի շարք արյունալի գործողություններ իրականացնել Թուրքիայի ողջ տարածքում: Այդ նպատակով PKK-ն Թուրքիա է գործուղել իր 50 ներկայացուցչի, որոնք նախապես 3 շաբաթ շարունակ «ռմբային կրթություն» են ստացել Ղանդիլում (Յյուսիսային Իրաք): Դրա հետ կապված՝

Թուրքիայի անվտանգության ուժերում հայտարարվել է «կարմիր տազնապ»:

Այդ կապակցությամբ Թուրքիայի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Նեջդեթ Օզելը, որը քրդերի դեմ քիմիական զենք գործածելու համար հայտնի է «քիմիական Նեջդեթ» մականունով, դժգոհեց, որ Բարզանիի վարչակազմը չի աջակցում Թուրքիայի, ԱՄՆ-ի ու Իրաքյան Քրդստանի կողմից ստեղծված PKK-ի դեմ պայքարի եռակողմ մեխանիզմին: Օզելի այս հայտարարությունը հերթական անգամ վկայեց, որ պաշտոնական Անկարան անուղակիորեն ճանաչում է PKK հարցի լուծման մեջ Իրաքյան Քրդստանի դերը: Սակայն խնդիրն այն է, որ ո՛չ Թուրքիան, ո՛չ ԱՄՆ-ը, ո՛չ էլ Բաղդադը չեն կարողանում (կամ ցանկանում) Բարզանիի կառավարությանը ստիպել ուժային գործողություններ իրականացնել PKK զինյալների դեմ:

Օզելը նաև հոխորտաց, որ այսուհետ իրենք իրենց օրակարգից ջնջելու են PKK անունը: Ի պատասխան, Իրաքի նախագահ Ջելալ Թալաբանիի որդին՝ Իրաքյան Քրդստանի վաշինգտոնյան ներկայացուցիչ Քուբադ Թալաբանին, հայտարարեց. «Ասում են, որ եթե ոչնչացվեն Ղանդիլում բազավորված 3000 PKK-ականները, ապա հարցը կլուծվի: Սակայն դա այդպես չէ. չէ՞ որ Թուրքիայի տարածքում գտնվում է 1 միլիոն PKK-ական: Ռազմական ճանապարհով չի կարելի հասնել հաջողության: Անգամ Սադամ Յուսեյնին չհաջողվեց ռազմական գործողությունների միջոցով ծնկի բերել Ղանդիլում բազավորվածներին»:

Բացի այդ, Օզելը հայտարարեց, որ նպատակահարմար չի համարում Թուրքիայում քրդերեն լեզվով կրթություն ստանալը, որով հարուցեց քրդերի խիստ դժգոհությունը: Քրդական Խաղաղություն եւ ժողովրդավարություն կուսակցության համանախագահ Սելահաթթին Դեմիրթաշը Անկարայում դատի տվեց նրան՝ քաղաքական նպատակներ հետապնդող ելույթով հանդես գալու համար: Ընդգծելով, որ (PKK քաղաքացիական թեւ համարվող) Քրդական համայնքների միության գործի շրջանակներում 2009թ. ապրիլի 19-ից ցայժմ Թուրքիայում ձերբակալվել է 6300 մարդ, որոնցից 1069-ը՝ այս տարվա առաջին 43 օրերին, Դեմիրթաշը ներկայացրեց քրդական հարցի կարգավորման վերաբերյալ մի շարք առաջարկներ. քրդական հարցի քաղաքական լուծման աջակցության նպատակով Խաղաղության հանձնաժողովի ստեղծում, Օջալանի վրայից մեկուսացման հանում (փաստաբանների հետ հանդիպման արգելքի վերացում) եւ բանակցային գործընթացին մասնակցելու հնարավորության ընձեռում, քրդերի դեմ թուրքական բանակի ռազմական գործողությունների դադարեցում եւ այլն:

Թուրքական իշխանությունները դեռ չեն պատասխանել նրան, սակայն ակնհայտ է, որ նրանք պատրաստ չեն ընդունել դրանք՝ առավել հակված լինելով քրդերի ձերբակալությունների ալիքն ուժգնացնելուն ու քրդերի դեմ ռազմական գործողություններ վարելուն: Սակայն վերջին քառորդ դարվա փորձը ցույց է տալիս, որ դա հաջողություն չի բերում եւ չի հանգեցնում քրդական հարցի կարգավորմանը: Այս առումով Թուրքիայի քրդերի համար մեծ նշանակություն կարող է ունենալ նոր սահմանադրությունը, որի ստեղծման աշխատանքները պետք է ավարտվեն առաջիկա ամիսներին, եւ որի համար Թուրքիան ուսումնասիրում է 60 երկրի սահմանադրություն:

ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՍԻՐԻԱՅԻ ՇՈՒՐՁ

Արտաշես Տեր-Հարությունյան

Իրավիճակային դիտարկում

Վերջին շրջանում Սիրիայի շուրջ ծավալվող զարգացումներից ամենաուշագրավը Ռուսաստանի դիրքորոշման մեջ տեղի ունեցած որոշակի շարժն է:

Հայտնի է, որ Մերձավոր Արեւելքում ռուսական քաղաքականության համար Սիրիան ունի կարեւոր նշանակություն: Հենց Դամասկոսի միջոցով է, որ Մոսկվան կարողանում է իր ներկայությունն ապահովել տարածաշրջանային շատ զարգացումներում, եւ Սիրիայի կորուստը Ռուսաստանի համար լրջորեն կսահմանափակի վերջինիս հնարավորությունները Մերձավոր Արեւելքում: Ուստի, անցած տարվա մարտից, երբ Սիրիայում սկիզբ առան զանգվածային հուզումներ, իսկ անցած ամիսներին էլ ալ-Ասադի վարչակազմի նկատմամբ ԱՄՆ ու նրա գործընկերների ճնշումն աստիճանաբար աճում էր, Մոսկվայի դիրքորոշումն անփոփոխ էր՝ պահպանել status quo-ն¹:

Սակայն վերջին շաբաթներին սիրիական հարցում Մոսկվայի մոտեցման մեջ, ինչպես ասացինք, սկսեց նկատվել որոշակի տեղաշարժ:

Այն բանից հետո, երբ փետրվարի 4-ին Մոսկվան ու Պեկինը վետո կիրառեցին ՄԱԿ Անվտանգության խորհրդում ԱՄՆ, Ֆրանսիայի ու Մեծ Բրիտանիայի առաջարկած բանաձեւի նկատմամբ², փետրվարի 7-ին Դամասկոս ժամանեցին Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը եւ Արտաքին հետախուզության ծառայության տնօրեն Միխայիլ Ֆրադկովը: Չնայած Սիրիայի նախագահ Բաշար ալ-Ասադի հետ վերջիններիս բանակցությունների վերաբերյալ պաշտոնական ձեւակերպումներից բացի ոչինչ չիրապարակվեց, սակայն այն փաստը, որ Մոսկվան Դամասկոս էր ուղարկել նման առանցքային գործիչների, ցույց է տալիս, որ ալ-Ասադի վարչակազմի հետ նոր որոշման հանգելու խնդիր կա³:

Բայց եթե սիրիական կողմի հետ բանակցություններում ռուսական կողմի նպատակներն առանձնապես գաղտնիք չեն՝ հասնել ալ-Ասադի վարչակազմի դիրքորոշման մեղմացմանը (դրա օգտին է, մասնավորապես, վկայում այն, որ Լավրովի ու Ֆրադկովի այցից հետո հայտարարվեց, թե առաջիկայում Սիրիայում ընդունվելու է նոր սահմանադրություն, որն ավելի լայն քաղաքական իրավունքներ կտա ազգաբնակչությանը), ապա

հայտնի չէ, թե արեւմտյան տերութիւնների հետ բանակցութիւններում Մոսկվան ինչ նպատակ է հետապնդում: Իսկ որ այդպիսի բանակցութիւններ ընթանում են, երեւում է ոչ միայն արեւմտյան գործիչների հայտարարութիւններից («հասկանալու և բացատրել Մոսկվային»), այլև ռուսական և սիրիական կողմերի համար անտրամաբանական կլիներ ինչ-որ պայմանավորվածության հանգել իրար հետ, եթե պայմանավորվածություն չի կայացվելու ԱՄՆ-ի և նրա գործընկերների հետ:

Պատահական չէ, որ Լավրովի և Ֆրադկովի այցից հետո Դամասկոս մեկնեց Չինաստանի փոխարտգործնախարար Չժայ Յզյունը, ուր նա բանակցութիւններ վարեց Սիրիայի նախագահի հետ: Ի վերջո՝ փետրվարի 18-ին հայտնի դարձավ, որ Ռուսաստանը հրավեր է ստացել մասնակցելու ամսվա վերջին թունիսում կայանալիք «Սիրիայի բարեկամներ» անվամբ միջազգային համաժողովին, ուր պետք է քննարկվի ալ-Ասադի վարչակազմի դեմ նոր ճնշամիջոցների կիրառման հարցը:

Սիրիայի շուրջ զարգացող իրավիճակի առանցքային ցուցիչ է, իհարկե, ԱՄՆ և նրա գործընկերների մոտեցումը կամ, ավելի ճիշտ՝ այդ մոտեցման էվոլյուցիան:

Եթե հարցին նայենք միայն արեւմտյան երկրների կողմից տարվող տեղեկատվական քաղաքականության համատեքստում, ապա ակնհայտ է, որ այսօր Սիրիան արեւմտյան օրակարգի առաջին կետում է: Լիբիայից հետո արեւմտյան հասարակութիւններին շարունակաբար նախապատրաստում են Դամասկոսում վարչակազմի փոփոխությանը:

Սիրիայում ալ-Ասադների վարչակազմի տապալումը, անշուշտ, աշխարհաքաղաքական հսկայական օգուտներ կբերի արեւմտյան երկրներին, եւ այդ առումով ամենազլխավորը, թերեւս, Իրանի մեկուսացման խորացումն է: Սակայն առկա է նաեւ հետեւյալ հանգամանքը. հաշվի առնելով, որ հակասիրիական կոալիցիայի երկու առանցքային երկրներում՝ Միացյալ Նահանգներում եւ Ֆրանսիայում, շուտով նախագահական ընտրութիւններ են, իսկ արտաքին քաղաքականութիւնն ավանդաբար հանդիսացել է որպէս հնարավորութիւն գործող թեկնածուի համար, ուստի, թե՛ Օբամայի, թե՛ Սարկոզիի վարչակազմերի համար ցանկալի չի լինի տանուլ տալը կամ նահանջը սիրիական հարցում:

Մինչդեռ, արեւմտյան կոալիցիան առայժմ միայն մեծացնում է ճնշումը Դամասկոսի նկատմամբ: Որոշ փորձագետներ, հաշվի առնելով վերջին շաբաթների մի քանի իրադարձութիւններ, արդէն իսկ խոսում են, թե Արեւմուտքը սկսել է կյանքի կոչել Բաշար ալ-Ասադի տապալման ծրագիրը:

Փետրվարի սկզբին Միացյալ Նահանգները, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան և եվրոպական մի շարք երկրներ դուրս բերեցին իրենց դիվանագիտական ներկայացուցչութիւնները Սիրիայից, ինչին հետեւեց Պարսից

ծոցի արաբական բոլոր միապետությունների, Լիբիայի ու Եգիպտոսի նույն քայլը: Ուշագրավ է, որ նշվածից հետո պաշտոնական Մոսկվան իր անհանգստությունը հայտնեց. Ռուսաստանի արտգործնախարարության ներկայացուցիչը հայտարարեց, թե դիվանագիտական ներկայացուցչությունների դուրսբերումը Սիրիայից կարող է վկայել առաջիկա ռազմական գործողությունների մասին: Թերեւս պատահական չէ, որ Սիրիայից իրենց ներկայացուցչությունների դուրսբերման որոշումն Արեւմուտքում կայացվեց ՄԱԿ Անվտանգության խորհրդում սիրիական բանաձեւի նկատմամբ Ռուսաստանի ու Չինաստանի կիրառած վետոյից հետո, որը լուրջ դժգոհություն առաջացրեց արեւմտյան երկրների շրջանում:

Յաջորդ ուշագրավ փաստը սիրիական ընդդիմության առաջնորդի երեւան գալն է: Փետրվարի 16-ին հայտնի դարձավ, որ Սիրիայի հիմնական ընդդիմադիր միավորումը՝ Սիրիայի ազգային խորհուրդը, առաջնորդ է վերընտրել Բուրհան Գալյունին, որով եւ կարծես թե փակվեց այդ կառույցում առաջնորդության համար պայքարը: Գրեթե միաժամանակ Սիրիայում գործող ընդդիմադիր զինված կազմավորումները հայտարարեցին, թե ստեղծում են միավորող նոր կառույց՝ Յեղափոխական բարձրագույն խորհուրդ, որը պետք է կոորդինացնի իրենց գործողությունները:

Եվ որպես վերջին կարեւոր ցուցիչ նշվում են ամերիկյան, եվրոպական ու իսրայելական լրատվամիջոցներում հայտնված հրապարակումները, թե Պենտագոնը նախապատրաստվում է Սիրիայի դեմ ռազմական գործողություններին, ու այդ նպատակով ամերիկյան անօդաչու թռչող սարքերն արդեն իսկ հետախուզական թռիչքներ են իրականացնում սիրիական տարածքում, որ Սիրիայում արդեն իսկ գործում են բրիտանական եւ քաթարյան հատուկ նշանակության ջոկատներ: Իհարկե, հնարավոր է, որ նշվածը սոսկ տեղեկատվական-հոգեբանական ճնշում է ալ-Ասադի վարչակազմի նկատմամբ, սակայն, եթե Արեւմուտքում որոշել են տապալել Դամասկոսում առկա վարչակազմը, դա կարող են ի վերջո անել միայն ռազմական ճանապարհով, ինչպես որ տեղի ունեցավ Լիբիայում:

Ի դեպ, ներկայացվածի ֆոնին ուշադրություն գրավեց «Ալ-Քաիդայի» ներկայիս առաջնորդ Այման ալ-Չաուհիրիի՝ փետրվարի 12-ին համացանցում հայտնված տեսաուղերձը, ուր վերջինս կոչ է անում մահմեդականներին տապալել Բաշար ալ-Ասադի վարչակազմը:

Յետեւություններ

Իրադրությունը Սիրիայում հետզհետե ապակայունանում է, եւ ներկայում ժամանակն աշխատում է արեւմտյան երկրների օգտին: Մյուս կողմից, եթե դիտարկում ենք կողմերի ռեսուրսները, առավելությունը դարձյալ արեւմտյան երկրներինն է: Յետեւաբար՝ ԱՄՆ-ի ու նրա գործընկերների

համար գոնե առայժմ անտրամաբանական է նահանջել, եւ առաջիկայում ճնշումն ալ-Ասադի վարչակազմի նկատմամբ պետք է որ միայն ուժեղանա:

Այս պարագայում Բաշար ալ-Ասադի համար գոյություն ունեցող տարբերակները կարծես թե այդքան էլ շատ չեն՝ շարունակել պատերազմը կամ հրաժարվել աթոռից: Սակայն կա նաեւ դաշնակիցների գործոնը: Միջազգային փորձագիտական հանրության ճնշող մեծամասնության գնահատականի համաձայն, միակ երկիրը, որը կարող է ռազմական օգնություն ցուցաբերել Սիրիային, Իրանն է, քանի որ թե՛ Ռուսաստանի, թե՛ Չինաստանի պարագայում Արեւմուտքի հետ հարաբերությունները ներկայում ունեն ավելի կարելոր՝ ռազմավարական նշանակություն, քան սիրիական հարցն է: Բայց որքան արդյունավետ կլինի իրանական օգնությունը Դամասկոսին, դժվար է ասել՝ կրկին հաշվի առնելով ռեսուրսների անհամաչափությունը:

Հաջորդ կարելոր հարցն այն է, թե որտեղից կարելի է նորություն սպասել: Քիչ հավանական է, որ նորություն ի հայտ գա Արեւմուտք–Սիրիա գծից. դատելով Սիրիայում ընդլայնվող արյունահեղությունից՝ այդտեղ առայժմ փակուղի է: Փոխարենը, հավանական է, որ նորություն ունենանք Ռուսաստանի (միգուցե՝ նաեւ Չինաստանի) հետ Արեւմուտքի բանակցություններից:

¹ Այդ նպատակով Մոսկվան դիմեց անգամ վերջին 20 տարվա իր արտաքին քաղաքականության համար անսովոր մի քայլի՝ ուժի ցուցադրությամբ. ռուսական ռազմաճակատն այց կատարեցին Սիրիա:

² Համաձայն այդ բանաձեւի, եթե 30 օրվա ընթացքում սիրիական իշխանությունները չէին դադարեցնում երկրում շարունակվող բռնությունները, ՄԱԿ Անվտանգության խորհուրդն իրեն իրավունք էր վերապահում պատժամիջոցներ կիրառել պաշտոնական Դամասկոսի նկատմամբ: Մոսկվան ու Պեկինը հայտարարեցին, թե իրենք մտավախություն ունեն, որ արեւոյան երկրները կօգտագործեն ՄԱԿ Անվտանգության խորհրդի այս բանաձեւը՝ Սիրիայում «լիբիական սցենար» կյանքի կոչելու համար:

³ Սիրիական խնդրում ռուսական դիրքորոշման մեջ տեղի ունեցող տեղաշարժի ցուցիչ է նաեւ մոսկովյան լրատվամիջոցներում խնդրի լուսաբանման փոփոխությունը: Եթե նախկինում իրադրությունը Սիրիայում ներկայացվում էր գրեթե բացառապես «օտարերկրյա ինտերվենցիայի» լույսի ներքո, ապա այժմ ավելի հաճախ կարելի է հանդիպել ալ-Ասադի վարչակազմին ուղղված քննադատություն:

**ԱՄԵՐԻԿԱՆ ԸՆԴԴԵՄ ՉԻՆԱՍԱՆԻ.
ՊԱՅՔԱՐ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Ալեքսանդր Դուդչակ**

*«Վերահսկեք նավթը, եւ վերահսկած կլինեք երկրներին,
վերահսկեք սննդամթերքը, եւ վերահսկած կլինեք մարդկանց»:*

3.Քիսինջեր

Ժամանակն է իրերն անվանել իրենց անուններով եւ ընդունել երկու աշխարհաքաղաքական բեւեռների առկայությունն աշխարհում: Դրանցից մեկն ակնհայտորեն Ամերիկայի Միացյալ Նահանգներն է: Մյուս բեւեռը տակավին փորձում է իրեն համեստ պահել, չցուցադրել ունեցած պոտենցիալը եւ, չնայած իր բազմահազարամյա պատմությանը, ոչ մի կերպ չի ցանկանում ընդունել իր գերտերություն լինելը: Եվ դա Չինաստանի ժողովրդական Հանրապետությունն է:

Չինաստանի այս ինքնատիպ քաղաքականությունը լիովին համապատասխանում է Դեն Սյաոպինի՝ դեռ 1978թ. ձեւակերպած «պատգամներին»: Դրանք չինական ռազմավարության ութ թեզիսներն են.

– սառնասրտորեն հետեւել; – ամրապնդել դիրքերը; – վստահորեն արձագանքել փոփոխություններին; – թաքցնել սեփական հնարավորությունները; – ժամանակ շահել; – ուշադրություն չգրավել իրենց հանդեպ; – երբեք առաջնորդ չդառնալ; – զբաղվել կոնկրետ գործերով:

Երկու պետությունն էլ գտնվում են ցեյտնոտի վիճակում:

Մեկին՝ ԱՄՆ-ին, հարկավոր է հասցնել մոլորակի մակարդակով վերահսկողության նոր ձեւ հաստատել բնական պաշարների նկատմամբ, որոնց մեջ ածխաջրածինները կարեւորագույնն են, բայց միակը չեն: Եվ դա անհրաժեշտ է անել ամենակարճ ժամկետում, քանի դեռ Չինաստանը չի ստեղծել հզորությամբ համադրելի զինված ուժեր եւ ամբողջ ուժով չի հայտարարել իր աշխարհաքաղաքական հավակնությունների ու նկրտումների մասին՝ առանց անհարկի համեստության: Եվ քանի դեռ դոլարը չի դադարել կատարել իր հիմնական գործառնությունները:

Մյուսին՝ Չինաստանին, հարկավոր է հասցնել կուտակած դոլարներն օգտագործել ոսկու-արծույթի պահուստներում, քանի դեռ դրանք դեռեւս ընդունում են տեխնոլոգիաների եւ արտադրական հզորությունների վճարման համար: Չինաստանի ոսկու-արծույթի պահուստները կազմում են մոտ 3,2 տրլն դոլար, որոնց 70%-ի անվանական արժեքը հենց

դոլարով է: Հարկավոր է հասցնել դոլարի այս զանգվածը ներդնել ռեսուրսների աղբյուրներում, տեխնոլոգիաներում եւ ստեղծել արդիական զինված ուժեր, որոնք ի վիճակի կլինեն պաշտպանել Չինաստանի շահերը մոլորակի ցանկացած կետում:

Հիմնական սպառնալիքն ԱՄՆ-ի համար Չինաստանի աճի տեմպերն են, նրա ռազմական հզորության ուժեղացումը:

Անշուշտ, ԱՄՆ-ում հիանալի տեղեկացված են Չինաստանի պլանների մասին: Ինչպե՞ս կանգնեցնել առայժմ ոչ թե թշնամու, այլ մրցակցի աճը:

Միջոցները շատ են, դրանք կիրառվում են համակարգային եւ համակցված ձեւով: Եվ եթե Չինաստանի դեմ զինված ագրեսիան արդեն անհնար է, ապա դրսից ձեւավորվում եւ ֆինանսավորվում է ներքին ընդդիմություն՝ որպես ճնշման միջոց, օգտագործվում են «միջազգային հանրության» մեղադրանքներն անբավարար դեմոկրատականության, «ոչշուկայական մրցակցության» եւ այլնի մեջ: Բայց մրցակցի հետ պայքարի կարելուագույն միջոցներից մեկը ռեսուրսների հասանելիությունից զրկելն է, առանց որոնց անհնար է երկրի տնտեսական աճը:

Այսօրվա դրությամբ իրողություններն այսպիսին են. պայքարը ռեսուրսների համար սաստկանում է: Եվ այդ պայքարում երկու հիմնական մոտեցում գոյություն ունի:

Առաջինը «չինականն» է: Տնտեսական եւ մշակութային էքսպանսիայի ռազմավարությունը, որի դեպքում ռեսուրսների հասանելիությունն ապահովվում է ներդրումներով, համագործակցությամբ, օտարերկրյա ներդրողների հանդեպ բնակչության լոյալության դաստիարակմամբ՝ գործընկեր երկրի բնակչության համար աշխատատեղերի ստեղծման, կենսամակարդակի բարձրացման, դպրոցների, հիվանդանոցների շինարարության միջոցով:

Երկրորդն «ամերիկյանն» է: Պատերազմ եւ «կառավարելի քաոսի» տարածքների հաստատում՝ բնակչության կենսամակարդակի կտրուկ անկմամբ: «Դեմոկրատական» հեղաշրջումների կազմակերպում, որոնցից հետո նախկին ներդրողներն արտաքսվում են երկրից, իսկ նոր ամերիկամետ վարչախումբը վերանայում է մինչ այդ կնքված պայմանավորվածությունները հօգուտ ԱՄՆ-ի եւ նրա մերձավոր դաշնակից-համամասնակիցների:

Պատերազմն Իրաքում. թերեւս, ԱՄՆ առաջին բացահայտ, անթաքույց զինված ագրեսիան ինքնիշխան պետության դեմ՝ ուղղված ոչ միայն եւ ոչ այնքան ոչնչացվող պետության, որքան Չինաստանի դեմ: Չնայած 1996–2003թթ. Իրաքի դեմ գործող սահմանափակիչ տնտեսական եւ առեւտրային էմբարգոյին՝ Չինաստանը 1997թ. Ալ-Ահդաբ հանքավայրի մշակման պայմանագիր ստորագրեց, այն հույսով, որ

ապագայում պատժամիջոցները կհանվեն: Բայց Իրաքի դեմ ԱՄՆ ագրեսիայի արդյունքում, 2003թ. մայիսին պայմանագիրը դադարեցվեց նոր գաղութային վարչակազմի ներկայացուցիչների կողմից, քանի որ, ըստ նրանց, «Իրաքը չի ընդունում բաասական վարչախմբի օրոք ստորագրված նավթագազային համաձայնագրերի պայմանները»: Նույնը տեղի ունեցավ նաև Ռուսաստանի, Ֆրանսիայի եւ այլ երկրների հետ Սադամ Յուսեյնի կառավարության ստորագրած շատ այլ պայմանագրերի պարագայում, որոնք վերաբերում էին նավթի մատակարարմանն ու նավթահանքերի մշակմանը:

2003թ. հանուն «դեմոկրատիայի» ԱՄՆ պատերազմն Իրաքում արաբական այդ երկիրը եւ նրա բնական հանածոները դարձրեց «ձեռքով» կառավարելի, ԱՄՆ-ը դարձավ իրաքյան նավթի գծով պայմանագրերի բաշխման գլխավոր տնօրինող:

Միայն 2008թ. օգոստոսին չինական CNPC ընկերությունն, այնուամենայնիվ, պայմանագիր ստորագրեց Իրաքի նավթարդյունաբերության նախարարության հետ՝ Ալ-Սիդաբ հանքավայրի մշակման վերաբերյալ: Սակայն, Իրաք վերադառնալու համար Չինաստանը ստիպված էր «ներել» Իրաքի 8 մլրդ արտաքին պարտքը: Իրաքում Չինաստանի համար լուրջ վտանգներ են շարունակում մնալ նաև զգալի չափով ԱՄՆ-ից ուղղորդվող անկայունությունը, ահաբեկչական գործողությունների սպառնալիքն ու բռնության աճը: Սա ցանկացած պահի կարող է լուրջ դժվարություններ ստեղծել Իրաքում չինական ընկերությունների գործունեության համար:

Սուդան. 1999–2009թթ. ՉԺՀ-ն երբեմնի միասնական այս երկիր ավելի քան 15 մլրդ դոլարի ներդրումներ է կատարել: Չինաստանը ներդրումներ է կատարել ոչ միայն նավթարդյունահանման, այլև տեղի բնակչության համար ճանապարհների, դպրոցների, հիվանդանոցների շինարարության մեջ: Սուդանում աշխատանքի կլիմայական պայմանները, ամերիկացի, ֆրանսիացի, բրիտանացի գործընկերների համեմատ, էական առավելություններ էին տալիս համեմատաբար քիչ պահանջկոտ չինացի աշխատողներին: Ի՞նչը կարող է մրցակիցների համար դժվարություններ ստեղծելու առումով (որպեսզի չկարողանան շարունակել գործունեությունը) ավելի արդյունավետ լինել, քան թիրախային տարածքում «կառավարելի քաոս» կազմակերպելը:

Ըստ արդեն մշակված սխեմայի՝ իրականացվեց Սուդանի մասնատումը երկու տարածքային պետական կազմավորման՝ Հարավային Սուդան (հիմնականում քրիստոնեական), որն իր անկախությունն ստացավ 2011թ. հունվարյան հանրաքվեի արդյունքում, եւ Սուդան (հիմնականում մահմեդական), որը զրկվեց իր հարավային մասից: Բացի

կրոնական նախապատվությունների տարբերությունից, ինչը մշտապես կարող է արդյունավետորեն օգտագործվել լարվածություն ստեղծելու համար, ընդհուպ մինչև զինված բախումները, կոնֆլիկտների պատճառ չի կարող չհանդիսանալ այն, որ երբեմնի ընդհանուր նավթային պաշարների 75%-ն անցավ Չարավային Սուդանին: Միեւնույն ժամանակ, Յյուսիսային Սուդանը վերահսկում է այն խողովակաշարերը, որոնցով Չարավի նավթն արտահանվում է:

2012թ. փետրվարի սկզբին Սուդանի նախագահ Օմար Բասան Բաշիրը հայտարարեց, թե հարաբերությունները Չարավային Սուդանի հետ բավական լարված են եւ ավելի շուտ մոտ են պատերազմի, քան խաղաղ գոյակցության:

Բնականաբար, նման պայմաններում դժվար է խոսել օտարերկրյա ներդրումների եւ օտարերկրյա ընկերությունների, անգամ՝ չինական, աշխատանքի մասին: Իսկ որպեսզի լոկալ քառսն ավելի կառավարելի եւ «կայուն» լինի, եւս մեկ ական է դրվել՝ վիճելի տարածք Սուդանի Յյուսիսի եւ Չարավի միջեւ, որն է Չարավային Կորդոֆան նահանգը: 2011թ. հունվարի 28-ին այս նահանգում 28 չինացի աշխատող է հափշտակվել: Սուդանում 15 մլրդ դոլարի չինական ներդրումների ապագան խիստ աղոտ է:

Լիբիա. Երկրորդ ուղղակի զինված ագրեսիան ընդդեմ անկախ պետության, որն այդ թվում ուղղված էր նաեւ Չինաստանի դեմ, ԱՄՆ-ն իրականացրեց 2011թ.: Իրադարձությունները Լիբիայում դժվար է ավելի ճշգրիտ մեկնաբանել, քան դա արել է հանրապետական, հայտնի տնտեսագետ, այժմ՝ Դուվերի ինստիտուտի վերլուծաբան (նախագահ Ռոնալդ Ռեյգանի օրոք՝ ԱՄՆ ֆինանսների փոխնախարար, «ռեյգանոմիկայի» հայր, Պատվո լեգեոնի շքանշանի ասպետ) Փոլ Քրեյգ Ռոբերտսը. «Մենք չենք ուզում տապալել Բաիրեյնի կամ Սաուդյան Արաբիայի կառավարությունը, որտեղ երկու կառավարություններն էլ ընդվզողների դեմ բռնություն են կիրառում, որովհետեւ դրանք մեր խամաճիկներն են, իսկ Բաիրեյնում մենք խոշոր ռազմածովային կայան ունենք: Մենք ուզում ենք տապալել Քադաֆիին Լիբիայում եւ Ասադին Սիրիայում, որովհետեւ ուզում ենք Չինաստանին եւ Ռուսաստանին դուրս քշել Միջերկրածովից... Չինաստանը ծավալուն էներգետիկ ներդրումներ էր իրականացնում Լիբիայի արեւելքում, եւ հենվում է նրա վրա՝ Անգոլայի եւ Նիգերիայի կողքին, իր էներգետիկ կարիքների առումով»:

Մինչեւ 2011թ. պատերազմը Չինաստանին բաժին էր ընկնում Լիբիայի նավթարտահանման 11%-ը: Միացյալ Նահանգների եւ Լիբիական Ջամահիրիայի սպանության մյուս համամասնակիցների՝ Չինաստանին հասցրած կորուստները հսկայական են: Չինաստանն իրականացնում էր

50 նախագիծ՝ 18,8 մլրդ դոլար ընդհանուր արժեքով: Լիբիայում աշխատում էին 75 խոշոր չինական ընկերություն եւ մինչեւ 30 հազ. չինացի, որոնք ստիպված էին տուն վերադառնալ պատերազմն սկսվելուց հետո: Միանշանակ պատասխան չկա այն հարցին, թե ինչ են լինելու այդ ներդրումները: Ամենայն հավանականությամբ, դրանք պետք է գրառել «Չինաստանի հերթական կորուստները ԱՄՆ կազմակերպած պատերազմի հետեւանքով» սյունակում:

Նիգերիա. վերջին 13 տարիներին՝ 1998-ից սկսած, ապրանքաշրջանառությունը Չինաստանի եւ Նիգերիայի միջեւ աճել է գրեթե 8 անգամ՝ 384 մլն-ից հասնելով 3 մլրդ դոլարի: 2011թ. սկզբի դրությամբ Չինաստանը Նիգերիայում ավարտել էր 2,18 մլրդ դոլար ընդհանուր արժողությամբ 117 կապալային օբյեկտ, ինչը 53,9%-ով ավելին է նախորդող տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատ: Նիգերիական նավթարդյունահանման գործում Չինաստանի ներդրումների ծավալը 2011թ. վերջին հասել է 4 մլրդ դոլարի:

Ըստ նավթային ոլորտում համագործակցության մասին 2010թ. կնքված համաձայնագրի՝ Չինաստանը ծրագրում է օգնություն ցուցաբերել Նիգերիային նավթավերամշակման երեք գործարան կառուցելու գործում, որոնց վերամշակման ընդհանուր հզորությունն օրական 885 հազ. բարել նավթ կլինի: Այդ գործարանների շինարարությունում ներդրումների ընդհանուր ծավալը գնահատվում է 25 մլրդ դոլար: Նավթային ոլորտը կարելուրագույնն է Նիգերիայի տնտեսության մեջ (7-րդ տեղն աշխարհում նավթարդյունահանման մակարդակով), այն ապահովում է երկիր կատարվող արժույթային բոլոր փոխանցումների 95%-ը եւ, ավանդաբար, գտնվում է երկրի նախագահի անձնական վերահսկողության եւ կառավարման տակ:

Ինչպես Սուդանում եւ մյուս երկրներում, Չինաստանն այստեղ եւս չի սահմանափակվում զուտ արդյունաբերական եւ բացառապես գործնական շահերով: Չինաստանն իմաստուն կերպով լոյալություն է դաստիարակում իր պետության հանդեպ, շահում այն երկրի բնակչության համակրանքը, որտեղ տնտեսական գործունեություն է իրականացնում: Մի քանի հարյուր նիգերիացի ուսանողներ հնարավորություն են ստացել ուսանելու Չինաստանում:

2010թ. արդյունքներով՝ Նիգերիան Աֆրիկայում մեծությամբ երկրորդ շուկան էր չինական արտադրանքի արտահանման համար եւ աշխարհամասում չորրորդը Չինաստանի առեւտրային գործընկերների ցուցակում:

Նման «չինամետ» անկաշկանդությունը ոչ մի կերպ չի կարող վրիպել ԱՄՆ ուշադրությունից: «Հալիբերթոն» ընկերությունը (որի գլխավոր գործադիր տնօրենը 1995–2000թթ. Դիք Չեյնին էր) առաջիններից մեկն

էր, որ ակտիվ աշխատանք սկսեց ածխաջրածինների նիգերիական շուկայում. 1994–2004թթ. ընկերությունը Նիգերիայում կաշառքի վրա 180 մլն դոլար ծախսեց՝ գազի հեղուկացման գործարան կառուցելու նպատակով 6 մլրդ դոլար արժողության պայմանագիրը ստանալու համար (Նիգերիային է պատկանում Աֆրիկյան աշխարհամասի գազի պաշարների 50%-ը): Ընկերությունն այս մասին խոստովանել է ԱՄՆ դատարանում: 2010թ. դեկտեմբերի 17-ին Նիգերիայի իշխանությունները հրաժարվեցին այդ երկրի դատարանում ԱՄՆ նախկին փոխնախագահ Դիք Չեյնիի եւ ամերիկյան «Չալիբերթոն» կորպորացիայի դեմ առաջ քաշած մեղադրանքներից: Իհարկե, կորպորացիայի կողմից 250 մլն դոլարի տուգանք վճարելու մասին պայմանավորվածությունից հետո:

Հավանաբար, հենց դրա համար էլ վերջին ժամանակներս ԱՄՆ-ը ակտիվորեն մեղադրում է Նիգերիային չտեսնված կոռուպցիայի մեջ: Ինչպես հայտնի է, կոռուպցիայի մեղադրանքներն են նախորդել եգիպտոսում, Թունիսում եւ մյուս երկրներում հետագայում կազմակերպված հեղաշրջումներին: Կարելի է կարծել, որ ձեւական առիթ Նիգերիայում «փոփոխությունների» համար արդեն կա:

Չինական ներկայությունն այս երկրում կվերացնեն նաեւ ավանդական այլ եղանակների օգտագործմամբ. օրինակ, միջդավանական բախումները:

Չինականում երկրի հարավային շրջաններում կենտրոնացած քրիստոնեական եւ հյուսիսային մասում գերակշռող մահմեդական համայնքների միջեւ լարվածությունն արդեն խորանում է: «Շնորհիվ» ծայրահեղական իսլամական կազմակերպությունների գործունեության՝ Յյուսիսի քրիստոնյաների դեմ արդեն ահաբեկչական աշխատանք է տարվում, ինչն ստիպում է նրանց փախչել դեպի հարավ, հանդիպակաց հոսքով, բնականաբար, դեպի հյուսիս են գալիս մահմեդականները:

Անգոլա. Չինաստանին նավթ մատակարարողների ցուցակում «մրցանակային» տեղեր զբաղեցնող երկրները մշտապես փոխվում են: 2004թ. դեպի Չինաստան նավթի մատակարարման ծավալով առաջին տեղը Սաուդյան Արաբիայինն է՝ 17,24 մլն տ, 2-րդն Օմանն է՝ 16,34 մլն տ, 3-րդը Անգոլան է՝ 16,2 մլն տ, 4-րդը՝ Իրանը՝ 13,2 եւ 5-րդը՝ Ռուսաստանը՝ 10,77 մլն տ: 2005-2010թթ. առաջին տեղում Անգոլան էր՝ Չինաստան նավթի մատակարարման ընդհանուր ներկրման 14%-ը:

Բոլոր «նախնական նշաններով» Անգոլային լուրջ սոցիալական ցնցումներ են սպասվում:

Թե ինչ պատրվակով դրանք կսկսվեն՝ այնքան էլ կարելոր չէ: Հնարավոր է՝ իրադարձությունների «թթխմորը» կհունցվի Հոլիվուդում, հնարավոր է՝ կդիմեն համակարգչային գրաֆիկային կամ էլ կօգտվեն

Լիբիայի կամ Ռուանդայի կադրերից՝ «փորձանքի» եւ «հումանիտար օգնություն» ցուցաբերելու անհրաժեշտության տպավորություն ստեղծելու համար՝ «անթռիչք զոտիներ» հաստատելով: Այս ամենը չնչին մանրուքներ են տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջանում:

Իրան. Իրանական նավթը Չինաստան ներկրվող ողջ նավթի 20%-ն է կազմում: Չինաստանը չի պաշտպանում Իրանի դեմ կիրառվող պատժամիջոցները եւ Ռուսաստանի հետ միասին արգելակում է «համաշխարհային հանրության» փորձերը՝ կիրառելու լիբիական սցենարը:

Իրանի հետ պատերազմի ներկայիս պատրաստությունը պայմանավորված է ոչ միայն այդ երկրի ածխաջրածնային պաշարների նկատմամբ վերահսկողություն սահմանելու խնդրով: Միահյուսվել են բազմաթիվ սյուժետային գծեր, մեկտեղվել ավելի գլոբալ շահեր: Պատերազմն Իրանում ձգանը քաշած նռնակ է: Այն վայր ընկնելուն պես կսկսվի պետությունների փլուզման շղթայական ռեակցիան Միջին Ասիայում եւ Մերձավոր Արեւելքում: Ի դեպ, ԱՄՆ-ում այս տարածքները վաղուց «Մեծ Արեւելք» են անվանում: Քուրդիստան, Բելուջիստան. շուտով կոսովոյանման նոր պսեւդոպետություններ ի հայտ կգան:

Իրանի ճակատագիրը կարող է փոխել միայն սովորական հրաշքը, օրինակ՝ միջուկային զենքի հանկարծ հաջող անցկացված փորձարկումները եւ օգտագործման պատրաստ միջուկային լիցքերի առկայության մասին հայտարարությունը, կամ էլ Չինաստանի եւ Ռուսաստանի կողմից Իրանն արտաքին ագրեսիայից պաշտպանելու համակարգված գործողությունները (այդ թվում եւ ռազմական օգնությունը):

Երկրների ցանկը, որտեղից ԱՄՆ-ը վտարում է Չինաստանին, կարելի էր շարունակել: Բայց միտումն ակնհայտ է: Ակամա հարց է ծագում. դեռ որքա՞ն Չինաստանը կկարողանա հանդուրժել մեծանվաստացումները: Եվ ի՞նչ ուղի կընտրի Չինաստանը՝ նախկին ներդրումները պաշտպանելու, թե՞ իր էքսպանսիայի ուրիշ ուղղությունների որոնման: Արժե՞ բարկացնել վիշապին, եթե այն վանդակում չի գտնվում: Եվ անհրաժեշտ չափերի վանդակն էլ ներկայիս նոր աշխարհակարգի ճարտարապետներից ոչ մեկն արդեն ի վիճակի չէ սարքելու:

Геополитика.ру

16-02-2012

«ԱՇԽԱՐՀԸ ԴԱՐՁԵԼ Է ԱՌԱՎԵԼ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԵՎ ԱՆԿԱՆԽԱՏԵՍԵԼԻ» Սերգեյ Կարազանով

Չարդ – Ինչպիսի՞ն են նախորդ տարվա արտաքին քաղաքական միտումները:

Պատ. – Աշխարհում բարձրացել է հեղափոխական քառսի նոր ալիք. այս անգամ այն շոշափել է նաեւ հին Արեւմուտքը: Եվրոպան ներքաշվել է տեւական՝ առնվազն տասնամյակ ձգվող համակարգային ճգնաժամի մեջ: Այն ստիպված է լինելու զբաղվել սոսկ իր գործերով: Ռուսաստանի հետ մերձեցման հույսերն աչքի առաջ նվազում են: Օբյեկտիվորեն, աշխարհաքաղաքական առումով, ե՛ւ Ռուսաստանը, ե՛ւ ԵՄ-ը մերձեցման մեջ շահագրգիռ են: Դա հասկանում են նաեւ ԵՄ երկրների վերին շրջանակներում: Սակայն հնարավորությունը, կարծես թե, բաց է թողնված:

ԱՄՆ-ը գտնվում է ավելի լավ վիճակում, բայց նույնպես անցնում է քաղաքական ալեկոծությունների, հասարակության ու քաղաքական վերնախավի պառակտման գոտիների միջով: Մերձավոր Արեւելքը «արաբական գարնան» հետեւանքով թեւակոխել է առայժմ անելանելի դեգրադացման հերթական փուլ: Իսրայելը գտնվում է հուսահատ վիճակում: Այդ կապակցությամբ ես վերջին տասը տարիների ընթացքում առաջին անգամ գտնում եմ, որ Իրանի դեմ պատերազմը դառնում է հավանական: Իսկ դա նշանակում է մեծ պատերազմ Մեծ Մերձավոր Արեւելքում: Դրանում, ճգնաժամի պատճառով, շահագրգիռ են գրեթե բոլորը, բացի Պեկինից: Վախենում եմ, որ Մոսկվան էլ այդքան դեմ չէ: Յուսանք, որ Թեհրանն իր մեջ ուժ կգտնի նահանջել եւ աշխարհը չի ներքաշվի հերթական անհուսալի հակամարտությունների մեջ:

Չարդ – Համարվում է, որ անցյալ տարվա գլխավոր համաշխարհային միտումը եղել է մարդկային վիթխարի զանգվածների վերադարձը քաղաքականություն: Եվ դա տեղի է ունենում Մեծ Մերձավոր Արեւելքից մինչեւ Մոսկվա ու Վաշինգտոն: «Ավանդական քաղաքական կյանքի համար» այն ինչի՞ կվերածվի՝ հուզումների եւ քառսի՞, թե՞ թարմացման, նոր առաջնորդների, նոր քաղաքական ուժերի առաջադրման:

Պատ. – Ներկա փուլում մարդկային վիթխարի զանգվածների վերադարձը քաղաքականություն ինձ՝ որպես ժողովրդավարական համոզմունքների տեր մարդու, չի կարող չուրախացնել: Որպես արտաքին քաղաքականության հարցերով մասնագետի՝ ինձ այդ միտումն ան-

հանգստացնում է: Ավանդական ժողովրդավարական երկրները չեն կարող անհրաժեշտ բարեփոխումներ սկսել, քանզի դրանք անխուսափելիորեն հարվածում են մեծամասնությանը: Այստեղից է Եվրոպայի լճացումը: Մերձավոր Արևելքի ժողովրդավարացումը տանում է համեմատաբար կայուն վարչակարգերի տապալման: Մուբարաքների տեղը գալիս է Աստված գիտի ով: Ամենայն հավանականությամբ՝ ծայրահեղ իսլամը: Վատ է իրավիճակը Եգիպտոսում: Մռայլ է իրավիճակը նաև Լիբիայում: Դեռևս ջրի երեսին են մնում միայն բոլորովին հետադիմական միապետությունները: Բայց արդյո՞ք երկար ժամանակ:

Նոր առաջնորդները կարող են երեւան գալ սոսկ կոնֆլիկտների հերթագայությունից եւ կանխատեսվող տեւական տնտեսական ճգնաժամից հետո: Փառք Աստծո, համաշխարհային պատերազմ չի լինի: Մեր գլխին, ինչպես միշտ, «դանոկյան սրի» պես կախված է միջուկային զենքի սպառնալիքը:

Հարց – Ռուսական արտաքին քաղաքականության հիմքը մնում է «կոշտ անվտանգության» խնդիրների վրա առավելագույն կենտրոնացումը: Արդյո՞ք այն հանդիսանում է արդի աշխարհի խնդիրներին երկրի ղեկավարների հայացքների իրական անդրադարձը, թե՞ դա ինչ-որ խաղ է:

Պատ. – «Կոշտ անվտանգության» խնդիրների վրա կենտրոնացումը, ինչպես ինձ թվում է, պայմանավորված է երեք հանգամանքով.

1. Ռուսաստանն առաջմ «փափուկ ուժեր»՝ տնտեսական, մշակութային, սոցիալական, քիչ ունի: Ուստի, շուկայական հոգեբանության օրենքներին համապատասխան, մենք փորձում ենք մրցակցությունը տեղափոխել այնտեղ, ուր կան մրցակցային առավելություններ, այսինքն՝ «կոշտ ուժի»՝ ռազմական, դիվանագիտական, էներգետիկական, ոլորտներ:

2. Աշխարհը դարձել է անհամեմատ առավել վտանգավոր եւ անկանխատեսելի, եւ տնտեսությամբ համեմատաբար հետամնաց երկրին, որն անխուսափելիորեն հիմնվելու է ռեսուրսների արտահանման եւ վերամշակման (այդ թվում, հուսանք, գյուղատնտեսական արտադրանքի), ինչպես նաև երկու-երեք համեմատաբար առաջավոր ճյուղերի վրա, անհրաժեշտ են հզոր զինված ուժեր: Այդ իմաստով ես ողջունում եմ բարեփոխումները Ռուսաստանի զինված ուժերում: Բոլոր սխալներով եւ անկատարությամբ հանդերձ, դրանց շնորհիվ է Ռուսաստանում ստեղծվում ժամանակակից զինուժ: Թեպետ ինձ նաև անհանգստացնում է, որ ժողովրդավարական վերահսկողության բացակայության պայմաններում մենք կարող ենք մեզ անհիմաստ կերպով ներքաշել սպառազինության մրցավազքի մեջ, որն արդեն մեկ անգամ կործանել է մեր երկիրը:

3. Արտաքին սպառնալիքի շուրջ ճարտասանությունը, որը համակարգային տեսքով բացակայում է, հարկավոր է նաև սպառազինության

վրա հսկայական ծախսերի արդարացման համար: Հնարավոր է՝ հետապնդվում են եւ զուտ ներքաղաքական նպատակներ: Մեր երկրի համար շատ դժվար է: Այն հազար տարի ձեւավորվել է մեկ գլխավոր նպատակի շուրջ՝ պաշտպանություն արտաքին սպառնալիքից: Թեպետեւ հարձակողական տարբերակով: Իսկ ահա այժմ, պատմության մեջ առաջին անգամ, նման սպառնալիք չկա: Դա վտանգ է մեր ինքնությանը: Սակայն երեւում է, որ արտաքին սպառնալիքի մասին հեքիաթներին չեն հավատում:

Հարց – Ի՞նչ կնշանակի ԱՄՆ-ում հանրապետական նախագահի իշխանության գալը: Չէ՞ որ, ինչպես ներկայացվում է, Հանրապետական կուսակցությունից թեկնածուները շրջակա աշխարհի նկատմամբ իրենց հայացքներում Պուտինից շատ չեն հեռացել:

Պատ. – Ես հասկանում եմ, որ «Ежедневный журнал»-ի էջերում ընդունված չէ պաշտպանել Պուտինին: Սակայն Ռուսաստանը Պուտին-Լավրովի դիվանագիտության օրոք անցկացնում է կոշտ, խիստ արդյունավետ եւ բավական զգույշ արտաքին քաղաքականություն, որը մեծապես հաշվի է առնում նոր աշխարհի նոր իրողությունները: Ուստի, Ռուսաստանը միջազգային կշեռքի նժարին անհամեմատ ավելի ծանր է կշռում, քան ենթադրում է նրա տնտեսական կամ ներքաղաքական զարգացումը:

ԱՄՆ հանրապետական առաջնորդներին եւ նրանց արտահայտություններին ես բավական սեւեռուն կերպով հետեւում եմ: Դրանք հուսահատեցնում են իրենց անհեթեթությամբ եւ գորշությամբ, արտաքին աշխարհի մասին պատկերացումների անհամարժեքությամբ: Եթե նման մարդիկ գան իշխանության եւ նրանց, ինչպես եղել է ամերիկյան պատմության մեջ, իշխող խավը չշրջապատի արհեստավարժների օղակով, հնարավոր է աղետ: Ամերիկյան քաղաքականությունը մեծ վտանգ կներկայացնի սեփական երկրի եւ մնացյալ աշխարհի համար: Ամերիկյան եւս մեկ պարտություն կկրի եւ բոլոր մյուսներին կտանի իր հետեւից:

Հարց – Մոսկվայի միջազգային նախաձեռնություններն առայժմ գործընկերների մոտ ըմբռնում չեն գտնում: Բավական է հիշել «հատվածական ՅՕՊ-ի» կամ եվրոպական անվտանգության նոր պայմանագրի նախագծի մասին: Դա վկայում է, որ Ռուսաստանն առաջադրում է անընդունելի պայմաններ, կամ Արեւմուտքը պարզապես չի ցանկանում նրան դիտել որպես իրավահավասար գործընկերոջ:

Պատ. – Մեր նախաձեռնություններն ըմբռնում չեն գտնում տարբեր նկատառումներով: Կարծում եմ, որ «հատվածական ՅՕՊ-ի» գաղափարը չէր էլ կարող հաշվարկված լինել հաջողության համար, այլ հաշվարկված էր կամ հարաբերությունների գիտակցաբար սրման, կամ (որը ես պաշտպանում եմ) ՅՕՊ ոլորտում սպառազինության մրցավազքի ճանապարհին առավելագույն խոչընդոտների ստեղծման համար: Միաժամանակ, հուսով

են, որ մենք ինքներս չենք հավատալու մեր փաստարկմանը, թե եվրոպական ՅՕՊ-ը լուրջ սպառնալիք է մեր ռազմավարական ուժերին, այլ ոչ թե 99 տոկոսով քաղաքական նախաձեռնություն – ամերիկացիների փորձը՝ որեւէ կերպ մնալ Եվրոպայում, որտեղից նրանք հեռանում են:

Ինչ վերաբերում է եվրոպական անվտանգության մասին պայմանագրին, ապա գաղափարը շատ հաջողված գտնվեց: Այն ակտիվացրեց եվրաանվտանգության ապագայի մասին բանավեճը եւ Կրաստանում Արեւմուտքի ռազմական պարտության հետ միասին դադարեցրեց ՆԱՏՕ ընդարձակումը դեպի արեւելք, որը սպառնում էր Կենտրոնական Եվրոպայում մեծ պատերազմով:

Եվ եկեք փորձենք իրատես լինել: Շատ բան վատ է մեր երկրում: Սակայն արտաքին ասպարեզում Ռուսաստանը շատ ավելի է կշռում, քան ողջ ԵՄ-ը: Արտաքին աշխարհում Եվրոպան նվազող մեծություն է: Այնուամենայնիվ, Եվրոպայի ճգնաժամը շահավետ չէ Ռուսաստանին: Թուլանում է նրա՝ մեզ անհրաժեշտ քաղաքակրթական մագնիսականությունը: Արտաքին քաղաքական թմբիրի մեջ է պոտենցիալ դաշնակիցը:

Հարց – Ի՞նչ ապագա է սպասվում Եվրասիական միության ստեղծման նախաձեռնությանը:

Պատ. – Ինչ-որ նման բան առաջարկել էր Սոլժենիցինը: Ռուսաստանը, ցավոք, ինչպես սեփական, այնպես էլ ներեվրոպական շարժառիթներով, հնարավորություն չունի հիմնավորապես մերձենալ Եվրոպային: Մենք նաեւ Չինաստանի հետ միության տարբերակ չունենք, բացի որպես «կրտսեր եղբոր» իրավունքով տարբերակից: Նաեւ Չինաստանը մեզ չի հրավիրում:

Այս իրավիճակում Եվրասիական միությունն՝ իբրեւ քաղաքական տարրով տնտեսական միավորում, կարող է լինել միակ այլընտրանքը ռազմավարական մեծությանը: Սակայն պետք է նրա սահմանների հարցում կողմնորոշվել: Եթե դա Բելառուսը, Ռուսաստանը, Ղազախստանն են՝ դեպի նրանց Ուկրաինայի անխուսափելի դրեյֆով, որը նույնիսկ տեսականորեն եվրոպական ընտրություն չունի, եւ եթե Ռուսաստանը կարողանա թեկուզեւ սկսել հաղթահարել զարգացման լճացման մոդելը, միությունը կարող է լինել խելամիտ տարբերակ: Բայց եթե մենք պատրաստվենք այնտեղ ընդունել բոլորին, այդ թվում Կենտրոնական Ասիայի երկրներին, կրկնենք ցարերի ու կոմունիստների սխալը՝ գաղափարը դատապարտված է: Ռուսաստանին վերջապես պետք է իր արտաքին սահմանների հարցում կողմնորոշվել: Հուսով եմ, դա կլինի Ղազախստանի հարավով անցնող միասնական սահմանը:

ԱՄԵՐԻԿԱՆ ԵՎ ԳԼՈՒԲԱԼ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՍԸ *Ձրիգնել Բժեզինսկի*

Վերջերս Նյու Յորքում տեղի ունեցավ Ձրիգնել Բժեզինսկու «Ռազմավարական հայացք. Ամերիկան եւ գլոբալ իշխանության ճգնաժամը» նոր գրքի շնորհանդեսը: Ազգային անվտանգության հարցերով ԱՄՆ նախագահ Ջինի Քարթերի նախկին խորհրդականն այնտեղ ներկայացնում է արդի աշխարհում իրեն մտահոգող խնդիրները:

Ստորել ներկայացնում ենք հատվածներ «Комсомольская правда»-ին Բժեզինսկու տված հարցազրույցից:

Հարց – Ձեր գրքում Դուք ուրվագծում եք նոր աշխարհի կործանման պատկերը, որտեղ ԱՄՆ-ը հայտնվում է տնտեսական անկման մեջ՝ բազմապատկած քաղաքական անզորությունն ու ռազմավարական մեկուսացումը, մինչդեռ Չինաստանն այդ նույն ժամանակ կատարում է պատմական կտրուկ թռիչք:

Պատ. – Իրոք, եթե Ամերիկան շարունակի ներքին քաղաքականության մեջ սահել ներքել ու վարի անհեռատես արտաքին քաղաքականություն, ապա, միանշանակորեն, կգա նրա մայրամուտը: Սակայն, արդյունքում, հաղթողների մեջ չի լինի անգամ Չինաստանը: Կհաղթանակի քաոսը: Իմ տեսանկյունից՝ մոտակա 20 տարիներին համաշխարհային ասպարեզում չի կարող վերջին տարիների Ամերիկային համեմատելի գերտերություն հայտնվել: Որովհետեւ աշխարհում գնում է ապակենտրոնացման գործընթաց: Հզորությունը, ուժը, ազդեցությունն անկասելիորեն տեղափոխվում են Արեւմուտքից դեպի Արեւելք: Պահանջվում է խելամիտ փոխզիջում: Եթե մեզ չհաջողվի դրան հասնել, ապա բոլորիս սպասվում է համաշխարհային քաոս, որից հեռու չէ նաեւ մարդկային քաղաքակրթության վերջը:

Հարց – Ինչո՞ւ է ԱՄՆ-ն այդքան սրընթաց կերպով կորցնում գրավ-չությունն աշխարհում: Միգուցե դա կապված է նրա հետ, որ Ամերիկան իր վրա է վերցրել համաշխարհային ժանդարմի դե՞րը:

Պատ. – Չի կարելի ասել, թե Ամերիկան արդեն բոլորովին համա-կրանք չի վայելում աշխարհում: Սակայն պետք է ցավով արձանագրել. վերջին 20 տարիներին մենք կորցրինք այն բացառիկ վարկը, որը մեզ տրամադրեց պատմությունը Խորհրդային Միության փլուզման արդյունքում: Բայց չէ՞ որ 1990-ական թվականների սկզբին գրեթե բոլոր քաղա-

քաղաքները միաձայն պնդում էին, թե սկսվում է ԱՄՆ անվերապահ գերիշխանությունն աշխարհում: Մենք հնարավորություն ունեինք սկսել վերածել աշխարհը, բայց արդյունքում իրավիճակը շատ ավելի անհանգիստ ու բարդ ստացվեց, քան դրանից առաջ էր:

Հարց – Ի՞նչն էր պատճառը:

Պատ. – Առաջին. անհրաժեշտ է նկատի առնել գլոբալ քաղաքական զարթոնքի ֆենոմենը: Անցյալում, մարդկության ողջ պատմության ընթացքում ժողովուրդները երբեք այդքան բացահայտորեն չեն արտահայտել իրենց ինքնագիտակցությունն ու քաղաքական նկրտումները: Այն աշխարհը դարձրեց դժվար կառավարելի: Երկրորդ. դադարեց գոյություն ունենալ Արևմուտքի գերիշխանության ֆենոմենը: Վերջին երկու տասնամյակում տեղի ունեցան իրադարձություններ՝ արժանի ակտիվության: Նախեւառաջ, Ամերիկյան քամահրանքով վերաբերվեց սեփական ներպետական զարգացմանը: Մենք թույլ տվեցինք մի իրավիճակ, որի ժամանակ մեր հասարակության մեջ խորացավ սոցիալական անհավասարությունը: Եթե 1990թ. ձեռնարկությունների տնօրենների աշխատավարձը 70 անգամ էր գերազանցում միջին ամերիկացու աշխատավարձը, ապա այժմ այդ տարբերությունն աճել է մինչև 325 անգամ: Դրանով արհամարհվեց արդարությունը հասարակության մեջ՝ կայուն պետության գլխավոր հիմքը:

Մենք զարգացրել ենք այնպիսի ֆինանսական համակարգ, որի օրոք աշխարհում մեծաքանակ գործարքներ գործնականում իրականացվում են առանց վերահսկողության՝ հանգեցնելով հրեշավոր չարաշահումների եւ մի քանիսի չափից ավելի ինքնահարստացման:

Մենք թույլ ենք տալիս հնամաշ լինել մեր ենթակառուցվածքներին՝ տրանսպորտ, կապ, կրթություն, առողջապահություն՝ այնտեղ գործնականում ներդրումներ չկատարելով:

Մենք վարում ենք պատերազմներ՝ չվճարելով սեփական բյուջեից, այլ վերցնում ենք անվերջանալի փոխառություններ, ինչը մեզ վերածում է անվճարունակ պարտապանի:

Ներքին դժվարությունները փոխգործակցում են արտաքին քաղաքական խնդիրների հետ: Վերջին երկու տասնամյակի ընթացքում մենք կորցրինք չափի եւ համեստության բանական զգացումը:

Հարց – Ձեր հայրենակիցներից լսել ենք այն կարծիքը, թե այսօր «ամերիկյան երազանք» հասկացությունը վերածվել է դատարկ խոսքի:

Պատ. – Գիտեք, որ Ամերիկյան միշտ եղել է հնարավորությունների երկիր, եւ յուրաքանչյուր սերունդ ապրել է այն մտքով, որ նյութապես ավելի լավ է ապրելու, քան իր հայրերը: Սակայն բոլորովին վերջերս այդ

գործընթացն արգելակվել է: Այսօր, օրինակ, միջին եվրոպացին հնարավորություն ունի կյանքում եւ կարիերայում ավելի արագ հաջողությունների հասնել, քան ամերիկացին:

Չարց – Հետխորհրդային երկրներից շատերը հաճույքով ընդօրինակում են ԱՄՆ միջին եւ բարձրագույն կրթության համակարգը. ներդրվում է վճարովի կրթությունը, կրճատվում են սովորելու համար պարտադիր առարկաներ, բուհ ընդունվողների համար մտցվում են միասնական պետական քննություններ...

Պատ. – Դուք շոշափեցիք Ամերիկայի համար ցավոտ թեմա: Ինձ շատ է անհանգստացնում կրթության խնդիրը մեր երկրում: Այո, մենք ժողովրդավարություն ենք, որը փորձում է գոյատևել բարդ աշխարհում՝ իրականացնելով խելացի արտաքին քաղաքականություն: Բայց դա հնարավոր է մի պայմանով՝ եթե մեր երկիրը բնակեցրած ժողովուրդը նույնպես խելացի է ու ողջամիտ: Այլապես, մենք ի վիճակի չենք լինի իրականացնել մեր առջեւ ծառայած խնդիրները:

Ստիպված եմ խոստովանել. ամերիկյան ժողովուրդը ծայր աստիճան անգրագետ է: Այն բոլորովին պատկերացում չունի արտաքին աշխարհի մասին: Մեր պետական դպրոցներում «Համաաշխարհային պատմություն» առարկա չկա: Մենք երեխաներին սովորեցնում ենք շատ հայրենասիրական ամերիկյան պատմություն: Իսկ իրականում այն «Ծննդյան տոների» գունազարդված պատմություն է՝ հեռու անցյալի բարդ ու հակասական իրողություններից: Վերցնենք, օրինակ, փոխհարաբերություններն Ամերիկայի բնիկ ազգաբնակչության՝ հնդկացիների հետ: Որքան էլ դա վիրավորական լինի, բայց պետք է խոստովանել, որ «օրենքի անունից» առաջին էթնիկ զտումներն իրականացվել են ամերիկյան հողում: Հազարավոր հնդկացիներ իրենց հողերից վտարվել են նախագահ Ջեքսոնի օրոք... Իսկ վերցնենք աշխարհագրությունը: Մենք այն չենք դասավանդում: Ամերիկյան վարժարանների ներկայիս շրջանավարտների գրեթե 52 տոկոսը չի կարող քարտեզի վրա ցույց տալ, թե որտեղ է գտնվում Նյու Յորքը: 2003–2010թթ. բուհ ընդունվողների 70 տոկոսը չէր կարողանում գտնել Իրաքը՝ երկիր, որի հետ մենք պատերազմում էինք: Մի անգամ ապագա ուսանողներին առաջարկեցին նույնականացնել քարտեզի վրա երկնագույնով ներկված մի մեծ տարածք: Եվ այսպես. նրանց 30 տոկոսը չկարողացավ որոշել, որ դա Խաղաղ օվկիանոսն է... Դուք ժպտում եք: Բայց դա ամենեւին ծիծաղելի չէ: Այստեղից՝ մեծաթիվ ամերիկացիների անհավատալի անլուրջ վերաբերմունքն արտաքին քաղաքականության հարցերի նկատմամբ: Եվ ինչպե՞ս է այդ միջազգային խնդիրների ամբողջությունը հրամցվում հրապարակային բանա-

վեճերում: Հաճախ չափազանց թեթև՝ բացառապես սեւ-սպիտակ գույներով, ընդ որում՝ գերակշռում է ամբոխավարությունը:

Հարց – Ձեր գնահատականը «Գրավիր Ուոլ-սթրիթը» շարժմանը:

Պատ. – Ես «օկուպանտների» առիթով խառը զգացումներ եմ տածում: Զգացմունքային մակարդակում ես նրանց համակրում եմ: Համաձայն եմ նրանց հետ, ովքեր գտնում են, որ այդ շարժումն օբյեկտիվորեն առաջացել է արդի հասարակության մեջ քաղաքական ու սոցիալական գաղափարների բեւեռացման, տարբեր խմբերի շահերի բախման հետեւանքով: Հնարավոր է, դա գերազանց ահազանգ է, որը պետք է լսեն իշխանավորները: Բայց հանուն ինչի՞ սեփական առողջությունը ենթարկել վտանգի՝ տարվա ցուրտ եղանակին գիշերելով վրաններում: Եվ հետո, նրանց ելույթները հղի են վերաճելու անկառավարելի սոցիալական կոնֆլիկտի: Այն, ինչ տեղի ունեցավ Լոնդոնում անցյալ տարվա օգոստոսին՝ զանգվածային անկարգություններ, ավերումներ, կողոպուտներ, որոնք հանգեցրին մարդկանց մահվան, ցուցադրում է անպատասխանատվությունն ու անվերահսկելի դաժանությունը, որին կարող են վերածվել խաղաղ բողոքները: Եվ, այնուամենայնիվ, ես մտածում եմ, որ ամերիկյան ժողովրդավարությունը պետք է իր մեջ ուժ գտնի՝ ճնշիչ միջոցներ չկիրառելու այդ շարժման մասնակիցների դեմ:

Հարց – 2007թ. Դուք պաշտպանեցիք Բարաք Օբամայի առաջադրումը նախագահի պաշտոնին: Ասում են՝ այժմ Դուք նրա գաղտնի խորհրդականն եք արտաքին քաղաքականության հարցերով:

Պատ. – Ոչ, դա այդպես չէ: Ես հնարավորություն ունեմ ժամանակ առ ժամանակ նրան արտահայտել այս կամ այն խնդրի վերաբերյալ իմ հայացքները: Սակայն եթե դա ամեն օր կանոնավոր կերպով տեղի չի ունենում, ապա հակառակորդների հետ վեճերում, որոնք ձգտում են նույնպես ազդել նախագահի վրա, դուք լիովին չեք վերահսկի իրավիճակը: Բայց Օբաման խելացի մարդ է եւ հիանալի տարբերում է՝ որն ինչի համար է:

Հարց – Ինչպիսի՞ն է, Ձեր կարծիքով, հավանականությունը, որ Ամերիկան ամենամոտ ժամանակներս կսկսի պատերազմն Իրանի հետ:

Պատ. – Իրանը լրջագույն խնդիր է, որի լուծման համար պահանջվում է իմաստուն մոտեցում: Պարզապես պատերազմի մեջ մտնել՝ անխոհեմ է: Հատկապես Աֆղանստանում ռազմական գործողությունների տասնամյա փորձից հետո: Հեշտ է պատերազմ սկսել, բայց դժվար է այն ավարտել: Առավել եւս, որ նման պատերազմի հետեւանքները դժվար է կանխատեսել: Ներկայիս պատերազմներն Ամերիկային էժան չեն նստում: Մենք կարողացանք հաղթել նացիստական Գերմանիային եւ միլիտարիս-

տական ճապոնիային չորս տարում՝ իհարկե, խորհրդային բանակի հետ: Թալիբանի հետ այժմյան պատերազմը շարունակվում է 10 տարի, եւ, ճշմարիտն ասած, նրա վերջը չի երեւում: Իսկ քանի տարի պահանջվեց, որպեսզի մաքրվի Իրաքը: Սակայն այնտեղ դեռ հիմա էլ անհանգիստ է:

Հարց – Ինչպե՞ս եք գնահատում իրավիճակը Թեհրանի միջուկային ծրագրի շուրջ:

Պատ. – Իրավիճակը միանգամայն հաղթահարելի է, եւ, անշուշտ, զսպման ենթակա: 40 տարվա ընթացքում՝ «սառը պատերազմի» տարիներին, մենք անցկացրինք Խորհրդային Միության միջուկային զսպման քաղաքականություն: Մենք զսպեցինք նաեւ Զինաստանին՝ վեճի մեջ «վերջին փաստարկի» գործադրումից:

Զէի ցանկանա մանրամասների մեջ խորանալ, սակայն այդ տարիներին, մեր դեմ միջուկային զենքի կիրառման դեպքում, ինձ վրա էր դրված ԱՄՆ նախագահի պատասխանի համակարգման պարտականությունը: Մի անգամ ինձ արթնացրեց գեներալի կոչումով իմ օգնականը, ով զեկուցեց, թե միջուկային զրոհ է սկսվել: Խոստովանում եմ, ես սկզբում չէի կարողանում ուշքի գալ եւ կենտրոնանալ: Ես գիտեի, որ Վաշինգտոնում գտնվող իմ ընտանիքը 20 րոպե անց մահացած կլինի: Եվ իմ բոլոր մտքերն ուղղված էին այդ փաստի գիտակցմանը: Իսկ հետո վրա հասավ անդորրության տարօրինակ զգացումը. սա վերջն է, վերջը բոլորի համար: Եվ այնտեղ, ուր մենք ենք գնալու, գնալու է նաեւ նա՝ մեր հակառակորդը... Բարեբախտաբար, դա կեղծ տագնապ էր...

Այսօր Ամերիկային հաջողվում է զսպել Իրանի միջուկային հավակնություններն այն սպառնալիքի շնորհիվ, որ անհապաղ հետեւելու է կաթվածահար անող պատասխան: Ես կարծում եմ, որ մենք մեզ վրա պետք է վերցնենք այնպիսի հրապարակային պարտավորություններ, ինչպիսին որ ընդունել էինք Եվրոպայում մեր ՆԱՏՕ դաշնակիցներին պաշտպանելու համար. այսինքն՝ Իրանի ցանկացած սպառնալիք՝ նրա կողմից միջուկային զենքի տիրապետման եւ մերձավորարեւելյան երկրների դեմ դրա կիրառման դեպքում, Միացյալ Նահանգների կողմից պետք է դիտվի որպես հարձակում հենց իր՝ ԱՄՆ-ի վրա:

Ընդ որում՝ հարկ է նկատի ունենալ, որ միջուկային զենքին հնարավոր տիրապետումը ծանրակշիռ պատճառ է, ուստի, Ամերիկան պետք է շատ զգուշավոր եւ ողջամիտ լինի, մինչ նոր պատերազմ կսկսի այդ տարածաշրջանում: Այսպիսի պատերազմներում հաղթողներ չեն կարող լինել: Եվ չարժե այս առումով պատրանքներ տածել:

«Комсомольская правда», 14.02.2012

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Արա Սանճյան

ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ԱՌԱՋ	1
---	---

Ռուբեն Մելքոնյան

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՇՈՒՐՋ	9
--	---

Սեւակ Սարուխանյան

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՏԱՐԻՆ ԻՐԱՆՈՒՄ ԵՎ ԻՐԱՆԱ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԲԱԽՈՒՄԸ	13
--	----

Հայկ Գաբրիելյան

ՔՐԴԱԿԱՆ ԱԿՏԻՎԱՑՈՒՄ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ	18
--	----

Արտաշես Տեր-Հարությունյան

ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՍԻՐԻԱՅԻ ՇՈՒՐՋ	25
-----------------------------------	----

Ալեքսանդր Դուդչակ

ԱՄԵՐԻԿԱՆ ԸՆԴԴԵՄ ՉԻՆԱՍՏԱՆԻ. ՊԱՅՔԱՐ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ	29
--	----

Սերգեյ Կարազանով

«ԱՇԽԱՐՀԸ ԴԱՐՁԵԼ Է ԱՌԱՎԵԼ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԵՎ ԱՆԿԱՆԽԱՏԵՍԵԼԻ»	36
---	----

Զբիգնեյ Բժեզիճսկի

ԱՄԵՐԻԿԱՆ ԵՎ ԳԼՈՒԲԱԼ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ	40
---	----

Շապիկին պատկերված է
Աղջրկու բերդը (Թորթուն գավառ)

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Մելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 3,5 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակները՝ «Arial Armenian», «Hay Helv»
եւ «VS Helvetica»:
Վկայական՝ Օ1Մ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: